22 ՅՈՒՆՈՒԱՐ 2011 ՇԱԲԱԹ 10(4629)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Զոհվել է հայ զինծառայող. խախտվել է հրադադարը ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում

Կարծում ենք, որ յուրաքանչյուր տրամաբանող արարածի համար վաղուց արդեն հասկանալի է, որ եթե վեճից հետո մեկը հարվածում է, ապա նա պարտվողն է, որն ունի «կրածը» հետ բերելու ցանկություն, հաղթանակի մոլուցք: Հայ-ադրբեջանական հակամարտությունում պարտվող կողմն ադրբեջանականն է, ու կարծում ենք, յուրաքանչյուրին վաղուց արդեն հասկանալի է, որ երբ կրակում են առաջին գծում, ապա սկսում է Ադրբեջանը. ինչո՞ւ, օրինակ, պետք է առաջին կրակը բացի ԼՂՀ պաշտպանական դիրքերում կանգնած զինվորը, այն էլ այն ժամանակներում, երբ միջազգային հանրությունը մեկ՝ ոչ լրիվ տարվա մեջ ճանաչեց նախ կոսովցիների, ապա եւ հարավսուդանցիների ինքնորոշման իրավունքը: Ուրեմն առաջինը կրակելու խնդիր միանշանակ ունի ադրբեջանական կողմը:

Ինչպես հաղորդում են ԼՂՀ պաշտպանության բանակի լրատվության բաժնից. «Հունվարի 20-ի երեկոյան ժամը 18.00-ի սահմաններում, շփման գծի հարավային հատվածում՝ Հորադիզի մերձակայքում տեղակայված հենակետերից հակառակորդը սանձազերծել է ինտենսիվ հրաձգություն, որի պատճառով զոհվել է ԼՂՀ ՊԲ զինծառայող Հովիկ Մկրտիչի Սուքիասյանը: Արցախի պաշտպանական ուժերի ձեռնարկած համարժեք պատասխան գործողություններից հետո հակառակորդի ակտիվությունը ճնշվել է: Ըստ նախնական տվյալների, փոխհրաձգության ընթացքում ադրբեջանական զինուժի կրած կորուստն անհամեմամատ մեծ է: Միջադեպի մանրամասները ճշտվում են»: ԼՂՀ ՊԲ-ն նաեւ ընդգծում է. «Ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում իրադրությունը շարունակում է մնալ անհանգիստ: Ինչպես նախորդ տարվա ողջ ընթացքում, այնպես էլ 2011 թ. մեկնարկային ամսում դա հիմնականում արտահայտվում է հակառակորդի նախահարձակ գործողություններով, որոնց ընթացքում ոչ միայն արձանագրվում են հրադադարի ռեժիմի խախտման դեպքեր, այլեւ դիվերսիոն գործողությունների փորձեր»:

Իր հերթին ՀՀ ՊՆ-ի մամուլի քարտուղար **Դավիթ Կարապետյանը**, նախարարության անունից ցավակցություն հայտնելով զոհված Հովիկ Սուքիասյանի հարազատներին, նշել է. «Այս միջադեպը եւս մեկ անգամ փաստում է, որ Ադրբեջանի իշխանությունները կամ չեն վերահսկում սեփական զինված ուժերի վարքագիծը առաջնային գծում, կամ իրենք են կազմակերպում նման սադրանքները: Երկու դեպքում էլ պատասխանատվությունը Ադրբեջանի ղեկավարության վրա է»:

Պաշտոնական Բաքուն, սակայն, հերքում է, բնականաբար նախ այն, որ հրադադարի ռեժիմը առաջինը խախտել են իրենք, ապա նաեւ, որ «ադրբեջանական կողմի կորուստն անհամեմատ մեծ է»: Նախ՝ պետական «ԱՊԱ» գործակալությունը նշեց, որ «հրադադարը խախտվել է ոչ թե Հորադիզի մոտ, այլ Թարթառ գետի մերձակայքում», այնուհետեւ, մեջբերելով Ադրբեջանի ՊՆ մամլո քարտուղարի տեղակալ, կապիտան Թեյմուր Աբդուլաեւի խոսքերը, նշեց. «Ադրբեջանցի սպա՝ 1986-ին ծնված Շամիլ Ալի օղլու Սադիգովը, հայկական կողմից բացված կրակի հետեւանքով, զույգ ոտքերին ստացել է ծանր վնասվածքներ: Այժմ սպայի վիճակը գնահատվում է բարվոք»:

Արդեն Ադրբեջանի պաշտպանության նախարարության հաղորդագրությունում նշված է. «Ադրբեջանական զինված ուժերը որեւէ ապակայունացնող քայլի չեն դիմել շփման գծում, այդ բոլորը հայերի հորինվածքն է: Նրանք հորինել են նաեւ այն «փաստը», թե իբր ադրբեջանական կողմը ավելի ծանր կորուստներ է ունեցել: Ադրբեջանական բանակը միջադեպից զոհեր չի տվել: Իսկ իրականությունն այն է, որ Հայաստանի կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով զույգ ոտքերից վնասվածքներ է ստացել ադրբեջանցի սպա Շամիլ Ալի օղլի Սադիգովը: Որից հետո միայն ադրբեջանական կողմը բացել է պատասխան կրակը»: Հ. Ա.

# Համարբերգն ասում է՝ «քաղբանտարկյալ» եզրույթ չկա

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար **Թոմաս Համարբերգը** մեր երկիր իր քառօրյա այցից հետո երեկ ամփոփիչ ասուլիսում լրագրողներին փոխանցեց իր հիմնական մտահոգությունները: Համարբերգի այցի հիմնական նպատակն էր պարզել, թե 2008-ի մարտյան իրադարձությունների հետեւանքների վերացման առնչությամբ ի՞նչ է տեղի ունեցել: Սրան գումարվել են բանակում մարդու իրավունքների վերաբերյալ նրա ստացած տեղեկությունների ստուգումն ու վիճակի քննարկումն իշխանության հետ, լրատվամիջոցների բազմակարծության պահպանման խնդիրը: Մանրակրկիտ քննարկումներ ունենալով պաշտոնական շրջանակների, արտախորհրդարանական ընդդիմության, մարտի 1-ի դեպքերի զոհերի հարազատների եւ ազատազրկվածների հետ՝ Համարբերգը եւ իր հետ եկած 2 պատվիրակները կվերադառնան, նախ կմարսեն իրենց տեսածն ու լսածը, եւ ապա զեկույց կպատրաստեն եւ կներկայացնեն ԵԽ: Զեկույցի մեծ մասը, Համարբերգի խոսքով, նվիրված է լինելու մարտի 1-ի դեպքերի հետեւանքներին, որի առումով նրա մտահոգությունները վերաբերում էին 10 զոհերի մահվան հանգամանքների չբացահայտմանը, որը նա լուրջ ձախողում անվանեց, ինչը համարժեք է անպատժելիությանը: Ազատազրկվածների վերաբերյալ եւս հաճախ ծագող խնդիրների առումով նա հիշեցրեց, որ ե՛ւ ԵԽ-ն, ե՛ւ ԵԱՀԿ-ն հետեւել են դատավարություններին, դիտարկման վերաբերյալ զեկույց հրապարակել՝ մտահոգություններով: Այդ զեկույցում դատավարությունների անցկացման կարգի եւ արդարադատության առանցքային հիմնադրույթների վերաբերյալ քննադատություն է հնչել, թե արդյո՞ք անկողմնակալ են եղել այդ դատավարություններում, հիմք ընդունված ապացույցներն արհեստավարժ եւ հիմնավո՞ր են եղել: Իսկ 2009-ի ապրիլին կայացված համաներման որոշումը ողջունվել է, սակայն, նշեց Համարբերգը, համաներումից հետո էլ բանտերում մնում են մարդիկ, որոնք կապված են 2008-ի մարտյան իրադարձություններին. «Այս բոլորը ես քննարկել եմ իշխանությունների հետ եւ կոչ եմ արել, միջնորդել եմ, որ նրանք ազատ արձակվեն»: Հիմնական մտահոգությունները Համարբերգը սրանք համարեց: Տես էջ 2

# ԱԳՆ-ի հայտարարությո՞ւնն է հիմք, թե՞ անկախության մասին սահմանադրական ակտը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հարեւան երկրում ձեւավորվել են որոշակի կաղապարներ, որոնք, պարզվում է, խոր ազդեցություն են թողել ոչ միայն շարքային քաղաքացիների, այլեւ պետական պաշտոնյաների հոգեկերտվածքի վրա:

Իհարկե, արժե ադրբեջանական ժողովրդին ցավակցել: Բայց մենք այդ հնարավորությունը չենք օգտագործի, քանի որ Բաքվում դա կհամարեն «կոպիտ միջամտություն ինքնիշխան երկրի ներքին գործերին»: Իսկ ի՞նչ անենք, եթե մի խումբ հոգեվարներ, որ հարեւան երկրում տիրացել են իշխանությանը, դժբախտության են մատնում ոչ միայն իրենց միլիոնավոր հայրենակիցներին, այլեւ սպառնում նույն ճակատագրին արժանացնել նաեւ մեզ:

Պատասխանն, ինչպես ասում են, մակերեսին է՝ թույլ չտալ: Թույլ չտալ հնարավոր բոլոր միջոցներով, այդ թվում եւ խոսքով: Առայժմ, քանի դեռ նրանց ողջախոհության դաս բերելու հնարավորությունն ստացված չէ: Գոնե՝ հանուն նրա, որ պատմության դատաստանին ներկայանանք հանգիստ խղճով:

Ադրբեջանի արտգործնախարարությունը հանդես է եկել հերթական հայտարարությամբ եւ «խորին անհանգստությամբ» տեղեկացրել, որ «Եվրոհանձնաժողովի պաշտոնական կայքէջում Ժոզե Մանուել Բարոզուի ելույթը տեղացի եւ արտասահմանյան լրատվամիջոցների առջեւ (բնագրում հենց այդպես էլ գրված է- Վ. Ա.) տրվել է կրճատված տեսքով: Ավելին, ելույթի այն հատվածը, որտեղ Ժոզե Մանուել Բարոզուն խոսում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը սատարելու մասին, փոխարինված է այլ մտքերով»:

Այնուհետեւ Էլմար Մամեդյարովի տնօրինության «կոնտորան» անցնում է «ՏԱՍՍ-ը լիազորված է հայտարարել» ոճին եւ սպառնում, որ «այդ՝ ափսոսանք եւ հիասթափություն հարուցող փաստը կարող է հարցականի տակ դնել Եվրոպայի խորհրդի (այնքան են շտապել, որ Եվրոմիությունը եւ Եվրոպայի խորհուրդը շփոթել են - Վ. Ա.) հետ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը եւ համագործակցությունը»:

Տես էջ 3

# Թաներ Աքչամի դասախոսությունը՝ ցեղասպանության եւ հարկադրված ձուլման մասին

**Փետրվարի 3-ին «Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի» (ՀՈՒՀԱԱ) Բելմոնտի կենտրոնում Կլարք համալսարանում դասավանդող դոկտոր, պրոֆեսոր Թաներ Աքչամը դասախոսություն կկարդա «Հարկադրված ձուլումը որպես ցեղասպանության կառուցվածքային բաղադրիչ» թեմայով, հիմնված Ռաֆայել Լեմկինի չհրապարակված ինքնակենսագրական հատորի տվյալների վրա, որոնք թույլ են տալիս վերագնահատել ցեղասպանության վերաբերյալ որոշ դրույթներ: Լեմկինը գրել է. «Ցեղասպանությունը բաղկացած է երկու փուլից. ճնշված խմբակցության ազգային կերպարի ոչնչացում եւ փոխարենը՝ ճնշողի ազգային կերպարի հարկադրում»: Այս երկրորդ փուլը, ըստ Աքչամի, տարբեր ձեւերով կարող է իրականացվել, բայց «ձուլումն անկասկած դրանցից ամենաարդյունավետ միջոցն է», որին դժբախտաբար մինչ օրս քիչ է ուշադրություն դարձվել: Այս մասին է տեղեկացնում ՀՈՒՀԱԱ-ի լրատվական գրասենյակից ստացված հաղորդագրությունը:** Հ. Ծ.

# Սահմանադրական դատարանը կքննարկի հայ-ռուսական ռազմական համաձայնագիրը

**Ինչպես տեղեկանում ենք Սահմանադրական դատարանի կայքէջից, փետրվարի 15-ին դատարանը գրավոր ընթացակարգով քննարկելու է Գյումրու ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետի երկարաձգման վերաբերյալ փաստաթուղթը: Հիշեցնենք, որ անցյալ տարվա օգոստոսի 20-ին ՌԴ նախագահ Մեդվեդեւի՝ Հայաստան կատարած պետական այցի շրջանակներում ստորագրվեց երկկողմ համաձայնագիր՝ «ՀՀ-ի եւ ՌԴ-ի միջեւ ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու՝ թիվ 5 արձանագրությունը, որով, մասնավորապես ի տարբերություն 1995-ի մարտի 16-ին ստորագրած նախորդ համաձայնագրի, ռազմակայանի տեղակայման ժամկետը սահմանվում է 49 տարի (նախորդով 25 տարի էր): Այժմ, եթե ՍԴ-ն որոշի, որ փաստաթուղթը չի հակասում ՀՀ սահմանադրությանը, այն կներկայացնի Ազգային ժողովի վավերացմանը:** Հ. Ա.

# Նախագահի նոր օգնական

**Նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ Գեորգի Կուտոյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության նախագահի օգնական: Այս մասին հայտնում են նախագահի մամլո գրասենյակից:**

# ԼՂՀ-ի ԱԳ նախարարի տեղակալը՝ նախագահի խորհրդական

**Ինչպես տեղեկանում ենք ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը՝ հունվարի 21-ին ստորագրել է հրամանագիր՝ Վարդան Բարսեղյանին ԼՂՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնից ազատելու մասին: Նույն օրը ԼՂՀ նախագահի մեկ այլ հրամանագրով Վարդան Բարսեղյանը նշանակվել է ԼՂՀ նախագահի խորհրդական:**

# Այս տարի առաջինը Սաակաշվիլին գալիս է Հայաստան. սիրաշահո՞ւմ է ջավախահայությանը

«Հայ-վրացական հարաբերությունների հիմնաքարերից են վրացահայության եւ ջավախահայության քաղաքացիական, կրոնական, լեզվական, կրթամշակութային իրավունքների պաշտպանությունն ու նրանց առջեւ ծառացած հիմնախնդիրների լուծումը», Վրաստանի նախագահի այսօր Հայաստան ժամանելու առնչությամբ հայտարարություն է երեկ տարածել Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը:

Ինչպես արդեն «**Ազգը**» տեղեկացրել է, հունվարի 22-23-ը պաշտոնական այցով Հայաստան է ժամանում Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: Վրաստանի արտգործնախարարի տեղակալ Նինո Քալանդաձեն հայտարարել էր, թե հասկանալի է, որ 2011-ին իր առաջին արտասահմանյան այցը նախագահ Սաակաշվիլին իրականացնում է Հայաստան, «այսպիսով ընդգծելով երկու երկրների միջեւ առկա բարեկամական հարաբերությունները»:

Վրաց նախագահի պատվիրակության կազմում է լինելու նաեւ արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն, որը Երեւանում կհանդիպի իր հայ գործընկերոջ հետ: Ըստ վրացական արտգործնախարարության, հայ-վրացական քննարկվելիք հարցերում ներառված են լինելու երկկողմ քաղաքական եւ տնտեսական հարաբերությունները խորացնելու հեռանկարները:

Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհրդի հայտարարության համաձայն, Ջավախքի հիմնախնդիրներից առավել կարեւոր են հայոց լեզվին կարգավիճակ տրամադրելու հարցը, Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմին իրավական կարգավիճակ տրամադրելը եւ խորհրդային ժամանակաշրջանում բռնագրավված եկեղեցիները վերադարձնելը, ջավախահայ ազգային-հասարակական գործիչների նկատմամբ քաղաքական հետապնդումների դադարեցումը, ազգային-հասարակական գործիչ Վահագն Չախալյանի ազատ արձակումը: Խորհուրդը նաեւ առավել կարեւոր է համարել Հայաստան-Ջավախք սահմանակետում վրաց սահմանապահների կողմից կիրառվող՝ հայատառ գրքերի, թերթերի եւ ամսագրերի անցկացման արգելքի վերացումը, Ջավախքի հիմնախնդիրներով մտահոգ մի խումբ հայաստանյան գործիչների՝ Վրաստան մուտք գործելու արգելքի վերացումը, Ջավախքի հայկական դպրոցներում կրճատված հայերեն դասաժամերի վերականգնումը:

«Կոչ ենք անում երկու երկրների նախագահներին՝ բանակցությունների ընթացքում քննարկել նաեւ վերոնշյալ խնդիրները, որոնց լուծմամբ միայն հնարավոր կլինի կայուն եւ երկարաժամկետ հիմք ստեղծել հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման համար», ասվում է հայտարարության մեջ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հայաստանում հայտնաբերվել է գինու արտադրության հնագույն համալիրը




Հայաստանում հայտնաբերվել է աշխարհի ամենահին գինեգործարանը: «Արմաս» ակումբի բանախոսները երեկ հենց այս մասին էին խոսում: Անդրադառնալով Արենիի պեղումներին՝ ԳԱԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի տնօրեն **Պավել Ավետիսյանը** տեղեկացրեց. «Գինու արտադրության հնագույն համալիրը բացվել է Արենիում: Մեր ունեցած տվյալները թույլ են տալիս հայտարարել, որ Հայաստանը գինու արտադրության հնագույն օջախ է»: Արենիում հայ-իռլանդական-ամերիկյան արշավախմբերը պեղումներ են կատարում 2007 թվականից: Նրա փոխանցմամբ՝ հնագետների հենց առաջին դիտարկումները ցույց էին տալիս, որ գործ ունենք կավակերտ այնպիսի կառույցների հետ, որոնք վկայում են խաղողագործության մասին: Պավել Ավետիսյանն ասում է, որ անալիզների իրենց ունեցած արդյունքները 99 տոկոս հավանականությամբ վկայում են, որ գործ ունենք գինու արտադրության տեղամասի հետ: «Սպասում ենք ԴՆԹ-ի անալիզների վերջնական արդյունքներին, որպեսզի համոզված լինենք 100 տոկոսով», հավելեց Պավել Ավետիսյանը: Արենիի այս գինեգործարանին «**Ազգը**» անդրադարձել է դեռ անցյալ տարի:

Պեղումների արշավախմբի հայկական կողմի ղեկավար **Բորիս Գասպարյանը** երեկ նշեց, որ գինեգործական համալիրից հայտնաբերել են խաղողի ճյուղ, որը հանել են կարասներից, հնձան, իսկ կարասներից մեկի ծավալն էլ շուրջ 50 լիտր է, ինչը հնագույն ժամանակների համար բավականին մեծ տարողություն է համարվում: Բանախոսները նշեցին, որ, առհասարակ խաղողագործության ակունքները դեռ լավ ուսումնասիրված չեն: Երբ խոսում ենք խաղողի ընտելացման մասին, պետք է անդրադառնանք նաեւ ոռոգման խնդրին: Եթե Արենիում խաղողի ընտելացմամբ են զբաղվել, ուրեմն այդտեղ մեր թվարկությունից առաջ նաեւ ոռոգման համակարգ է եղել, իսկ ոռոգման ցանցի առկայությունը վկայում է բարձր զարգացած հասարակության մասին, ինչը գոյություն է ունեցել 5-րդ հազարամյակի վերջին: Պավել Ավետիսյանն ասում է, որ պեղված քարայրի հնագույն շերտերը վերագրում են մ. թ. ա. 5-րդ հազարամյակի վերջին ու 4-րդ հազարամյակի առաջին կեսին, գինեգործական ամբողջ համալիրը վերագրում են հենց այդ ժամանակահատվածին: «Գուցե ավելի հին շերտեր էլ բացենք», ավելացրեց Պավել Ավետիսյանը, ապա նշեց. «Եթե պարզվի, որ խաղողի արենի տեսակն անմիջական դուստրն է այն խաղողի, որն արձանագրել ենք Արենիում, դա արդեն կդառնա սենսացիոն փաստ»: Բանախոսներն ասում են, որ Արենին այնպիսի վայր է, որտեղից կարելի է սպասել բազմաթիվ սենսացիոն արդյունքներ: Արենիում իրականացվող ուսումնասիրություններին կապված, ըստ Պ. Ավետիսյանի, 3 հիմնական խնդիր կա: Նախ՝ դրանք պետք է կատարել ժամանակակից պահանջներին համապատասխան: Բացի դրանից՝ հայտնաբերված գինեգործական համալիրը Հայաստանի ու հայ գինեգործների համար դառնում է բրենդ, իսկ հնավայրն էլ կարող է դառնալ զբոսաշրջության էկզոտիկ վայր: Դեպի Արենի զբոսաշրջիկների հոսքը կունենա իր նպաստը նաեւ տնտեսության մեջ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Համարբերգն ասում է՝ «քաղբանտարկյալ» եզրույթ չկա

*1-ին էջից*

Նա խնդիրներ տեսավ նաեւ մարտյան իրադարձությունների ժամանակ ոստիկանության ոչ բավարար արհեստավարժ լինելու հետ կապված, այդ մասին նա քննարկումներ է ունեցել ոստիկանապետի տեղակալի հետ, որն իրականացվելիք միջոցառումների ծրագիր է ներկայացրել՝ արհեստավարժությունը բարձրացնելու ուղղությամբ: Արդարադատության նախարարի հետ էլ դատարանների գործելակերպի մասով մտահոգություններն է քննարկել՝ 2008-ի կրկնողությունը բացառելու համար: Նրա կարծիքով՝ պետք է լուծել 10 անձանց մահվան հանգամանքների բացահայտման եւ ազատազրկվածների խնդիրը: Իսկ բանակում եղած խնդիրները հստակ կանոնների սահմանմամբ պետք է լուծվեն, չարաշահումներին լրջորեն արձագանքմամբ, ամբողջ անձնակազմը վերապատրաստելով, ստեղծելով բողոքարկման այնպիսի համակարգ, որը ոտնձգությունների դեմ բողոքողներին կպաշտպանի. այս խնդիրները լուծելու առումով պաշտպանության նախարարն ու զինդատախազը դրական են արձագանքել:

ԶԼՄ-ների դաշտում մտահոգությունները բազմակարծությանն էին վերաբերում, հատկապես հեռուստատեսության ոլորտում, որը Համարբերգը քննարկել է ՀՌԱՀ-ի նախագահի հետ, հիմնականում «Ա1+»-ի եւ ԳԱԼԱ-ի հետ կապված, նշելով, որ անհրաժեշտ է բազմակարծություն ապահովել:

Պատասխանելով լրագրողների հարցերին, մասնավորապես արդյո՞ք «քաղբանտարկյալ» են ազատազրկվածները, հանձնակատարը նկատեց, որ մարդու իրավունքների միջազգային համաձայնագրերում «քաղբանտարկյալ» եզրույթը չկա, քանի որ անհասկանալի կլիներ այն սահմանել որեւէ մեկ դիտանկյունից՝ իրենց այդպիսին համարողների՞, թե՞ որոշում կայացնողների շարժառիթները հաշվի առնելով: Իսկ բանավեճերում այդ եզրույթն օգտագործելը նշանակում է լուրջ խնդրի առկայության մասին՝ մարդու իրավունքների տեսակետից, եւ սա վերաբերում է մարդու արդար դատաքննության իրավունքին եւ անկախ համոզմունքներից՝ օրենքի առաջ հավասարության սկզբունքներին: Այս առումով նա մատնանշեց ե՛ւ ԵԱՀԿ զեկույցը, ե՛ւ ԵԽ հանձնակատարի ավելի վաղ դիտարկումները, թե դատավարություններում երկու առումով էլ եղել են հիմնախնդիրներ: Նա խնդիր տեսավ, որ մարդիկ դատապարտվել են ազատազրկման՝ այդ երկու սկզբունքների խախտումների քաղաքական նկատառումներ են եղել, եւ այդ պատճառով, ըստ նրա, նրանք չպետք է լինեին բանտում: Բայց եւ հանձնակատարը չի օգտագործում «քաղբանտարկյալ եզրույթը», քանի որ մարդու իրավունքների միջազգային իրավական ակտերում որեւէ հղում չկա: Իսկ անհատների գործերն իշխանությունների հետ նա մանրամասն քննարկել է, ճիշտ է, պատասխաններ չկան, բայց տպավորություն ուներ, որ իշխանությունները մտածում են այդ մասին:

Իսկ ինչ վիճակ է Հայաստանում մարդու իրավունքների տեսակետից, եվրոպական կառույցները սանկցիաներ կարո՞ղ են կիրառել Հայաստանի հանդեպ՝ ընդդիմադիրների երազանքը Համարբերգին փոխանցեց լրագրողը. Համարբերգը խուսափեց գնահատել՝ լա՞վ է, թե՞ վատ վիճակը մեր երկրում (ընդհանրապես՝ դա նրա սկզբունքն է), քանի որ դա կախված է նրանից, թե ի՞նչ դիտանկյունից ես նայում դրան: Ինքը փորձում է սեւեռվել դեռ մնացող խնդիրներին: Իսկ պատժամիջոցներ, ինչքան էլ երազողներ լինեն, հազիվ թե կիրառվեն, ըստ Համարբերգի՝ դիտորդի կարգավիճակով արված ենթադրության: ԵԽԽՎ-ն քննարկել է Հայաստանի պատվիրակությանը որպես պատվիրակի ձայնի իրավունքից զրկելու հնարավորությունը, սակայն դրա դեմ կա այն փաստարկը, թե գործադիրի արածի համար ինչո՞ւ պիտի պատժվի խորհրդարանական պատվիրակությունը, մանավանդ դա հակասում է գործադիրի եւ օրենսդիրի տարանջատման վերաբերյալ ԵԽ սկզբունքին: Հազիվ թե այդպիսի քննարկում լինի, բայց դա չի նշանակում, որ Հայաստանի խնդիրներին արձագանք չի լինի. ԵԽ երեք մարմիններ այստեղ անելիք ունեն՝ Մարդու իրավունքների դատարանն՝ այնտեղ ներկայացված գործերով, ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովը՝ քննարկման տեսքով, որը սակայն իր անդամ երկրի պատվիրակության հանդեպ պատժամիջոց կիրառելուց կխուսափի (կարծիքները միջազգային հանրությանը հասցնելն ավելի արդյունավետ կարող է լինել), Նախարարների կոմիտեն եւս պատժիչ գործողությունների վրա չի սեւեռվի: Մնաց հանձնակատարը, որը զեկույց կհրապարակի:

Համարբերգը նշեց, որ Նիկոլ Փաշինյանն իր հետ հանդիպման ընթացքում լավ պատրաստված էր, համաձայնեց, որ Սասուն Միքայելյանը սրտի պրոբլեմ ունի, իսկ ողջ վերեւում ասվածը մի քանի անգամ տարբեր ձեւերով կրկնեց՝ հարցերին ի պատասխան:



# «Հայկական սովորությունները՝ որպես էթնիկական ժառանգության մասնիկ»

Այս թեմայի շուրջը անցյալ տարվա նոյեմբերի 6-ին ՀԲԸՄ-ի Փասադենայի կենտրոնում դասախոսություն է կազմակերպել «Հայ կին» խմբակցությունը: Ըստ ստացված հաղորդագրության, բացման խոսքը կատարել է կազմակերպության ակտիվ անդամ, գրող եւ ուսուցչուհի Սոնա Զեյթլյանը, որը խոսել է Դերսիմի հայերի մասին: Այնուհետեւ հրավիրվել է Սոնա Հագոպյանը՝ օրվա գլխավոր բանախոսը, որն անդրադարձել է անցյալի աստվածներին ու աստվածուհիներին (Անահիտ, Վահագն, Աստղիկ եւ այլք) եւ կարեւորել մեր ազգային տոներն ու ավանդական սովորությունները (Նոր տարի, Սբ Սարգիս, Տյառնընդառաջ, Բարեկենդան, Համբարձում, Վարդավառ եւ այլն):

Վերջում դերասանուհիներ Սոսի եւ Մարաշ Վարժապետյանները թատերական մանրապատումներ են ներկայացրել մեր առօրյայում առկա սնահավատությունների վերաբերյալ:

Հ. Ծ.

# Քայլարշավից մոտ 12 հազար դոլար ի նպաստ Մոնրեալի Մանուկյան վարժարանի



ՀԲԸՄ-ի Մոնրեալի մասնաճյուղի անցյալ տարվա հոկտեմբերին կազմակերպած 3-րդ տարեկան քայլարշավի ընթացքում հնարավոր է եղել մոտ 12 հազար դոլար հանգանակել ի նպաստ Ալեք Մանուկյան վարժարանի: ՀԲԸՄ-ի գրասենյակից ստացված հունվարի 14-ի հաղորդագրության համաձայն, մոտ 150 հոգի է մասնակցել քայլարշավին, այդ թվում՝ դպրոցական երեխաներ, մեծահասակներ եւ նախկին սաներ: Սկաուտների կամավորական խումբը հսկել է ճանապարհի անվտանգությունը՝ Հարութ Թաշչյանի առաջնորդությամբ: Իրադարձությանը ներկա են եղել Սեն Լորան շրջանի քաղաքապետ Ալան Դե Սուսան, Կանադայի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը, Ալեք Մանուկյան դպրոցի հիմնադիր Արշավիր Գյոնջյանը, ՀԲԸՄ-ի Մոնրեալի մասնաճյուղի նախագահ Արմեն Պչակճյանը, Թեքեյան մշակութային միության տեղի մասնաճյուղի նախագահ Արթօ Մանուկյանը եւ համայնքի ականավոր այլ ներկայացուցիչներ:

Հ. Ծ.

# ՀԲԸՄ-ի «Հաջորդ սերունդ» ծրագիրը կշարունակվի Գլենդեյլում

ՀԲԸՄ-ի Նյու Յորքի գրասենյակից ստացված հունվարի 13-ի հաղորդագրությունը տեղեկացնում է, որ, ընդարձակելով իր գործունեությունը, «ՀԲԸՄ-ի հաջորդ սերունդ» խորհրդատվական ծրագրի գրասենյակը տեղափոխվել է Գլենդեյլ՝ տեղի մեծագույն ավագ դպրոցի տարածքին մոտ գեոդեզիական հուշահամալիրը, որպեսզի ավելի մոտիկից համագործակցի Գլենդեյլի շրջանային Միացյալ կրթական համալիրի վարչության անդամների հետ բռնությունների կանխարգելման եւ ակադեմիական առաջադիմության բնագավառներում: Նոր գրասենյակի բացմանը ներկա են գտնվել մոտ 400 հոգի, այդ թվում՝ քաղաքապետ Արա Նաջարյանը եւ երեւելի այլ անձնավորություններ: Գրասենյակի ժապավենը կտրել է ՀԲԸՄ գլխավոր վարչության փոխնախագահի Սինան Սինանյանը:

Հ. Ծ.

# «Օթեւան» տեղեկագիր՝ նվիրված անօթեւանության հիմնախնդիրներին

**Գյումրու «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը վերջին երկու տարիներին ակտիվորեն զբաղվում է քաղաքում երկրաշարժից անօթեւանների համար բնակարանների կառուցման եւ բնակբաշխման գործընթացների մոնիտորինգով ու հրապարակայնության ապահովման, անօթեւան ընտանիքների իրազեկման եւ իրավունքների պաշտպանության խնդիրներով: Այդ խնդիրները լուսաբանելու եւ անօթեւաններին իրազեկելու է կոչված նաեւ կենտրոնի «Օթեւան» չորս էջանոց տեղեկագիրը, որի առաջին համարը լույս տեսավ օրերս:**

**Տեղեկագրում տեղ կգտնեն նշված գործընթացների շրջանակներում քաղաքի բնակչությանը հուզող հարցերի եւ տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ նյութեր, բնակարանների բաշխման անցկացվող վիճակահանությունների հայտարարություններն ու դրանց մասնակցելու հրավիրվող ընտանիքների ցուցակները եւ այլն: Կենտրոնն այդ տեղեկատվությունը տարածում է նաեւ էլեկտրոնային տարբերակով, անցյալ տարվանից գործող իր վեբ-կայքի միջոցով:**

**«Օթեւան» տեղեկագիրն առայժմ կտպագրվի ամիսը մեկ անգամ, սակայն հետագայում, հատկապես բնակբաշխման գործընթացի ակտիվացման շրջանում, կհրատարակվի ավելի հաճախակի պարբերականությամբ:**

Գ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

## Անցուդարձ

# Մայրաքաղաքը կունենա նոր գլխավոր ճարտարապետ ու դիզայներ





*Վահագն Առաքելյան*

Երեւանի ավագանու արտահերթ նիստի գլխավոր հարցը Երեւանի փոխքաղաքապետի նշանակումն էր: Քաղաքապետ **Կարեն Կարապետյանն** առաջարկեց Վահագն Առաքելյանի թեկնածությունը, ավագանու անդամներն էլ հաստատեցին: Քաղաքապետի բնորոշմամբ՝ Առաքելյանը լավագույն ֆինանսիստներից է, ազնիվ է, պարկեշտ ու բարեխղճորեն կկատարի ստանձնած պարտավորությունները:

Առաքելյանը կհամակարգի քաղաքապետարանի ֆինանսական հատվածը: Նա «Հայռուսգազարդ» ընկերության էկոնոմիկայի ու ֆինանսների հարցերով փոխտնօրենն էր: Վահագն Առաքելյանը մեկ շաբաթ առաջ է տեղեկացել, որ իրեն առաջարկվելու է փոխքաղաքապետի պաշտոնը: Համոզված լինելով, որ ինքը հաստատվելու է պաշտոնում, ծանոթացել է քաղաքապետարանի նորմատիվ-իրավական ակտերին՝ պարտականությունների շրջանակն ավելի լավ պատկերացնելու համար:

Մեկնաբանելով կարծիքը, որ Կարապետյանը «Հայռուսգազարդ»-ից իր մարդկանց բերում է քաղաքապետարան, Առաքելյանն ասաց, որ ինքն ավելի շուտ է դուրս եկել «Հայռուսգազարդից», քան Կարապետյանը, եւ չի հասկանում, թե ինչու է նման կարծիք ձեւավորվել: Առաքելյանը մայրաքաղաքի ֆինանսական վիճակին լիարժեք ծանոթ չէ, առաջիկա ծրագրերն էլ չմանրամասնեց: Միայն խոստացավ, որ բոլորի նկատմամբ լինելու է միասնական վերաբերմունք, եւ դա երեւանցիները զգալու են:

Փոխվել են նաեւ փոխքաղաքապետների գործառույթները: Նրանցից մեկը կհամակարգի կոմունալ տնտեսության, շինարարության եւ բարեկարգման, բնապահպանության, սոցիալական ապահովության ոլորտները, մյուսը՝ կրթության, առողջապահության, մշակույթի վարչությունները, երեխաների իրավունքների պաշտպանության, սպորտի ու երիտասարդության բաժինները:

Կարապետյանի ներկայացմամբ՝ կառուցվածքային փոփոխությունների շրջանակներում փորձել են հավասարաչափ բաշխել փոխքաղաքապետների պարտականությունները: Կարծիքը, թե փոխքաղաքապետ Տարոն Մարգարյանի լիազորությունները քաղաքապետարանում կրճատվել են, Մարգարյանը հերքեց. «Նման բան չկա»:

Այսուհետեւ կգործի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչություն, որը նպատակ ունի խիստ վերահսկողության տակ վերցնել վարչական շրջանների ղեկավարների աշխատանքը: «Այժմ քննարկում եւ ներկայացնելու ենք այն հատկանիշները, որոնց համաձայն վարչական շրջանն ամեն ամիս հաշվետվություն է տալու: Վարչական շրջանների հայտանիշների ամփոփումը, գնահատումը եւ հետագայում ռեյտինգավորումը կատարելու է այս բաժինը»:

Քաղաքի «պրինցիպալ զարգացման խնդիրն» էլ, ըստ քաղաքապետի, պետք է կատարի զարգացման եւ ներդրումային ծրագրերի վարչությունը, որի մեջ ընդգրկված են զարգացման եւ ներդրումային ենթակառուցվածքային ծրագրերի, միջազգային ներդրումային եւ այլ հաստատությունների համակարգման ու տուրիզմի զարգացման բաժինները: «Վարչության կարեւորագույն գործառույթներից մեկն էլ լինելու է այն, որ Երեւանում ներդրում կատարած բիզնեսմեններն իրենց ապահով զգան»:

Քաղաքապետարանի իրավաբանական վարչությունում ստեղծվել է նոր՝ բնակիչների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության բաժին, որը պետք է ամփոփի բնակիչների բողոքները, պրոբլեմները, բնակիչների իրավունքների ոտնահարման դեպքերն ու լուծումներ տա դրանց»:

Մայրաքաղաքն այսուհետեւ կունենա անկախ, ազատ ստեղծագործելու իրավունք ունեցող եւ քաղաքի առօրյա գործերից ազատված գլխավոր ճարտարապետ: Երեւանի բարեկարգմանն ու կառուցապատմանն առնչվող հարցերն էլ լուծելու է Երեւանի դիզայները:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱԿԱՄԱՀՄԵԴԱԿԱՆ

# Սիոնիստական Ադրբեջա՞ն

Հիմնականում արեւմտյան փորձագիտական շրջանակներում վաղուց արդեն շրջանառվում է մի կարծիք, անգամ համոզմունք, որ Ադրբեջանը առանձնահատուկ երկիր է մահմեդական աշխարհում: «Մի կողմից՝ Բաքուն եղբայրական հարաբերություններ ունի դեպի արաբական աշխարհ շրջված Թուրքիայի հետ, մյուս կողմից՝ ռազմավարական՝ գոնե ծրագրեր՝ Իսրայելի», նկատում են փորձագետները: Իրոք, չնայած հանգամանքին, որ վարչապետ Էրդողանը հրապարակավ հորդորեց իսրայելցիներին հրաժարվել արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանից, քանի որ վերջինս «շատ վտանգավոր է», Լիբերմանը հաճույքով է պարբերաբար լինում Բաքվում, ունենում հեռախոսազանգեր տարբեր ադրբեջանցի պաշտոնյաների հետ: Ու եթե գումարենք, որ վերջին օրերին առնվազն լրատվական դաշտում ականատես ենք իրանա-ադրբեջանական հակամարտության, ապա միանշանակ ընդունելի է արեւմտյան փորձագիտական շրջանակների կարծիքը՝ «Ադրբեջանը առանձնահատուկ երկիր է մահմեդական աշխարհում», սակայն մեկ վերապահում՝ որքանո՞վ է մոլլա սպանող, մզկիթ քանդող, հիջաբ արգելող ու «Իսրայելի հետ ձեռք սեղմող» Ադրբեջանը մահմեդական երկիր: Այս հարցին, թերեւս, պատասխանելով՝ Իրանի խորհրդարանի պատգամավոր Համիդ Ռասային խստորեն քննադատել է Ադրբեջանի իշխանություններին: Ճիշտ է՝ Ռասային հիմնականում խոսել է հիջաբի արգելքի մասին, բայց նրա խոսքերում կարելի է տեսնել Ադրբեջանի «մահմեդական չլինելու» այլ ապացույցներ եւս: Այսպես՝ իրանցի պատգամավորը, ըստ CNNTurk-ի նշել է. «Ամերիկացիները Ադրբեջանում ռազմաբազա ունեն: Այդ պատճառով էլ կարողանում են ազդեցություն գործել Բաքվի ընդունած որոշումների վրա: Ուսումնական կենտրոններում հիջաբի արգելքը ԱՄՆ-ի եւ սիոնիստների ցանկությունն է, քանի որ իսլամական ծածկոցը վտանգում է ԱՄՆ-ի եւ Իսրայելի շահերը: Պաշտոնական Բաքուն էլ, պետք է նկատել, մշտապես գործում է այդ լոբբիների ցանկություններով եւ հրահանգներով»: Հիշեցնենք, որ այս ուսումնական տարվա սկզբից ադրբեջանական դպրոցներում պաշտոնապես արգելվել է հիջաբը (աղջիկների մուսուլմանական գլխաշոր): Կառավարության այդ որոշման դեմ Ադրբեջանի խոշոր քաղաքներում՝ Բաքվում եւ Գանձակում, Ջալիլաբադում, Լենքորանում, Մասալլիում տեղի են ունեցել բողոքի ցույցեր, ոստիկանության հետ բախումներ, ձերբակալվել են 50 հոգի: Այս իրադարձությունների հետ կապված՝ մեր թերթը հունվարի 19-ի համարում, վկայակոչելով ադրբեջանական ընդդիմադիր «Ենի մուսաֆատ» թերթը, գրել էր, որ նույն թերթի «վստահելի աղբյուրների» տեղեկացմամբ պահանջվում է շիա մահմեդական Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ շեյխ Ալլահշուքյուր Փաշազադեի հրաժարականը, որի անձի վերաբերյալ «ոչ մահմեդականին վայել» կարծիքին են անգամ Իրանում ու Թուրքիայում:

Ադրբեջանը, սակայն, իր «հակաիսլամական լինելը» ապացուցելու համար, կարծես թե չի բավարարվում միայն հիջաբ արգելելով: «Թուրան» գործակալության տեղեկացմամբ՝ հունվարի 20-ին այդ իսլամական երկրում մեղադրանք է առաջադրվել հունվարի 7-ին ձերբակալված Ադրբեջանի իսլամիստական կուսակցության ղեկավար Մովսում Սամեդովի նկատմամբ. «Իշխանությունը բռնի կերպով վերցնելու փորձ»: Ստացվում է, որ հարեւան երկրում հեղափոխության փորձ է կատարվել, չնայած Սամեդովը մերժում է իրեն հասցեագրված բոլոր մեղադրանքները: Հատկանշական է, որ Սամեդովից բացի, ձերբակալվել են Իսլամիստական կուսակցության մի շարք անդամներ եւս, որոնց ճակատագիրը դեռեւս հստակեցված չէ:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ հունվարի 11-ին Բաքվում ձերբակալվեց նաեւ «Ազգային պետականություն» կուսակցության նախագահ Նեյմաթ Փանահլին, որը՝ 21 տարի առաջ հենց այս օրերին Նեյմաթ Փանահով էր եւ մասսաներին «ոգեւորում էր» «սարքենք երկրորդ Արարատը հայերի գլուխներով» կոչերով: Ինչպես արդեն տեղեկացրել է «**Ազգը**» հունվարի 12-ի համարում, Փանահովը ամենեւին էլ չի ձերբակալվել Բաքվի հայերի սպանդը կազմակերպելու համար, պարզապես հայր Ալիեւի մտերիմ խորհրդականը որդի Ալիեւի օրոք դարձել է ընդդիմադիր, եւ, հասկապես Իսլամիստական կուսակցության նախագահին հասցեագրված մեղադրանքի ֆոնին՝ գուցե եւ ինքն էլ անմասն չի եղել Ադրբեջանում հեղափոխություն անելու փորձերից:

Հ. ԱՓՅԱՆ

# «Պետք է փոխվի տնտեսական քաղաքականությունը»




Հայրենական ապրանքարտադրողների միության նախագահ *Վազգեն Սաֆարյանի* կարծիքով, այս տարին պետք է համարվի արդյունաբերության տարի: «Նովոստի» գործակալությունում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նա նաեւ հույս հայտնեց, որ կհաջողվի համախառն ներքին արդյունքում արդյունաբերության չափաբաժինը 23 տոկոսից հասցնել 27 տոկոսի: Վազգեն Սաֆարյանը նշեց, որ 2010-ին մեր արդյունաբերության ծավալները կազմել են մոտ 2,2 մլրդ դոլար, որը 1988-ի համեմատ ցածր է 7-8 անգամ: Ըստ նրա, պետք է փոխվի տնտեսական քաղաքականությունը: Հայաստանի վարչապետի մոտեցումները Վազգեն Սաֆարյանին հույս են ներշնչել, որ արդյունաբերության զարգացման նկատմամբ կառավարության բարեփոխումները այս տարի արդյունք կտան:

Նախարարական փոփոխությունների վերաբերյալ տրված հարցին պատասխանելով, Վազգեն Սաֆարյանն ասաց, որ կոալիցիոն կառավարության փոխարեն պետք է լինի ազգային համաձայնության եւ մասնագիտական կառավարություն: «Կառավարությունը փորձադաշտ չէ, եւ պետք է աշխատեն մասնագետները», նշեց նա:

Տեղական արտադրությունը, ըստ Հայրենական ապրանքարտադրողների միության նախագահի, պաշտպանված չէ մասնավորապես վարկային առումով: Կենտրոնական բանկի սահմանած 7,25 տոկոս վերաֆինանսավորման տոկոսադրույքը չի նպաստում արդյունաբերության զարգացմանը: Վարկերը արդյունաբերության համար պետք է լինեն 6-7 տոկոս, ուստի առեւտրային բանկերից այս ճյուղը չի կարող վարկեր վերցնել, եւ ճիշտ կլինի, որ նրան տրամադրվեն միջպետական վարկեր:

Ա. Ս.

# ԱԳՆ-ի հայտարարությո՞ւնն է հիմք, թե՞...

*1-ին էջից*

**Եվ, վերջապես. «ԱԳՆ-ն եւս մեկ անգամ հիշեցնում է, որ Ադրբեջանական հանրապետությունը Միավորված ազգերի կազմակերպություն, ԵԱՀԿ եւ մի ամբողջ շարք այլ միջազգային կազմակերպություններ ընդունվել է այն սահմաններում, որոնցում նա գտնվել է ԽՍՀՄ կազմում»:**

**Հայտարարության «մեխը» սա է: Եվ սա էլ հենց կեղծիքի ու խեղաթյուրումների արմատն է: Նախ, միութենական հանրապետություններից եւ ոչ մեկը ԽՍՀՄ կազմում չի դիտվել որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: «Աշխարհի մեկ վեցերորդ մասի» նկատմամբ ճանաչված է եղել ԽՍՀՄ ինքնիշխանությունը, որը բացարձակ էր, այլ ոչ թե՝ տասնհինգ «ինքնիշխանությունների հանրագումար»: Երկրորդ, «Պետական անկախության մասին» Ադրբեջանական հանրապետության սահմանադրական ակտի, որն ընդունվել է 1991 թ. հոկտեմբերի 18-ին, «Ընդհանուր դրույթներ» բաժնում սեւով սպիտակի վրա գրված է.**

**Հոդված 1. 1920 թ. ապրիլի 27-28 - ի ՌԽՍՖՀ XI բանակի ներխուժումն Ադրբեջան, Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության՝ միջազգային իրավունքի սուբյեկտի (սա բացահայտ կեղծիք է, որովհետեւ ԱԴՀ-ն դե յուրե չի ճանաչվել- Վ. Ա.) տապալումը հանդիսանում են Ռուսաստանի (պատահաբա՞ր են մոռացել «խորհրդային» բնորոշումը - Վ. Ա.) կողմից անկախ Ադրբեջանի օկուպացում:**

**Հոդված 2. Ադրբեջանական հանրապետությունը հանդիսանում է 1918 թ. մայիսի 28-ից (այստեղ չափազանցությունն աչքի է զարնում, որովհետեւ ԱԴՀ-ն մինչեւ թուրքական էքսպեդիցիոն կորպուսի կողմից Բաքվի գրավումը նույնիսկ փաստացի գոյություն չի ունեցել, իսկ այնուհետեւ գտնվել է բրիտանական հրամանատարության ենթակայության տակ այնքան, որ վերջինս արգելել է անգամ խորհրդարանի նիստերի գումարումը- Վ. Ա.) մինչեւ 1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանական հանրապետության («դեմոկրատականն» ինչո՞ւ բաց են թողել- Վ. Ա.) իրավահաջորդ:**

**Հոդված 3. 1922 թ. դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրն ստորագրման պահից Ադրբեջանին վերաբերող մասով անվավեր է»:**

**Սա է այն իրավական հիմքը, որի վրա կառուցվել է Ադրբեջանի անկախությունը: Բնականաբար, Ադրբեջանն իրավասու չէ պնդելու, որ ՄԱԿ-ին անդամակցել է «այն սահմաններում, որ ունեցել է ԽՍՀՄ կազմում», քանի որ այդ երկիրը նախ իրեն համարել է ոչ Ադր. ԽՍՀ-ի իրավահաջորդ, ապա եւ՝ իրեն վերաբերող մասով անվավեր ճանաչել ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը: Նա իրեն հռչակել է մի՝ միջազգային իրավունքի տեսակետից երբեւէ գոյություն չունեցած, դե յուրե չճանաչված, Ազգերի լիգայի կողմից լեգիտիմ սահմաններ չունենալու եւ հարեւանների հետ տարածքային վեճի մեջ գտնվելու պատճառով մերժված երկրի իրավահաջորդ, որը երբեք նույնիսկ փաստացի վերահսկողություն չի ունեցել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, էլ չենք խոսում Նախիջեւանի մասին:**

**Եվ եթե Բաքվում կարծում են, թե որեւէ մեկը կաշկանդված է «Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հարգելու հրամայականով», ապա խորապես սխալվում են: Ինչ վերաբերում է ՄԱԿ-ին կամ այլ կազմակերպության անդամակցմանը կամ որեւէ երկրի կողմից ճանաչմանը, ապա այդ դեպքերում, բնականաբար, հիմք է ընդունվել «Պետական անկախության մասին» վերոհիշյալ սահմանադրական ակտը, որը, ինչպես կարելի է հեշտությամբ համոզվել, առնվազն Լեռնային Ղարաբաղի մասով սահմանափակում է Ադրբեջանի ինքնիշխանությունը, ուստիեւ՝ տարածքային ամբողջականությունը: Քանի որ ամբողջական է այն տարածքը, որի վրա պետությունն իրականացնում է օրինականորեն ճանաչված ինքնիշխանություն:**

**Այս հարցում թերեւս կարելի է խորհուրդ տալ, որ «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտն անցնի համապատասխան միջազգային փորձաքննություն: Բայց դա, իրոք, արդեն Ադրբեջանի ներքին գործն է: Մեր դեպքում նման անհրաժեշտություն չկա. ԼՂՀ-ն ունի միասնական տարածք: Եվ դա այն է, որտեղ նա ինքնիշխանություն է իրականացնում:**

## Հարցազրույց

# Խավիեր Մարտինես Ֆերնանդես. Աշխարհը պետք է ճանաչի ճշմարտությունը

*Հայ ժողովրդի հրաշալի բարեկամ Խոսե Անտոնիո Գուռիարանին միշտ հաջողվել է զարմացնել ինձ իր նորություններով, որոնք կարճ կամ երկար հաղորդագրությունների միջոցով տարբերաբար հասցնում է մեզ: Այս անգամ էլ նրանից տեղեկացանք, որ մայիսի 31-ին իսպանական Գրանադայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ **Խավիեր արքեպիսկոպոս Մարտինես Ֆերնանդեսի** նախաձեռնությամբ «Փառավորյալ Խաչ Հայաստան. 1915-1918» վերտառությամբ մի ցուցահանդես է բացվել՝ նվիրված Մեծ Եղեռնի նահատակների հիշատակին: Անսպասելին ու զարմանալին այն էր, որ սրբազանը տեղյակ չէր նույնիսկ, թե որքան շատ հայեր են բնակվում Իսպանիայում:*

*Վաղուց նման բաներին սովոր ու հանկարծակիի չեկող Գուռիարանը խոստովանեց, որ այդ դեպքով, այնուամենայնիվ, ցնցված էր: Ցնցված էին բոլորը, ովքեր հոկտեմբերի վերջին կայացած փակման արարողության նախօրեին միայն տեղեկացան միջոցառման մանրամասներին: Արդեն պայմանավորվածություն է ձեռք բերվել Խ. Մարտինես Ֆերնանդեսի եւ Մամուլի միջազգային համաժողովի միջեւ, որպեսզի նույն ցուցահանդեսը բացվի նաեւ Մուրսիայում: Գրանադայի արքեպիսկոպոսը սիրով համաձայնեց պատասխանել մեր հարցերին:*



**- Սրբազան հայր, ինչպե՞ս ծագեց այս ցուցահանդեսը կազմակերպելու գաղափարը:**

- Ամեն ինչ սկսվեց տակավին 1977-ին, երբ ինձ հոգեւոր ուսման կատարելագործման համար Երուսաղեմ ուղարկեցին, եւ տեղի հայ համայնքի միջոցով հնարավորություն ունեցա ծանոթանալու հայ ժողովրդի պատմությանը: Հետո Սանտյագոյի Մայր տաճարում առաջին անգամ լսեցի հայկական հրաշագույն պատարագը, որի ընթացքում ծնվեց այն միտքը, որ պետք է մեզանում միանգամայն անծանոթ Արեւելքի քրիստոնյա ազգերի աշխարհը ներկայացնեմ Իսպանիայում: Ասում եմ՝ անծանոթ, քանզի պաշտոնական լրատվությունն այստեղ շատ չէ, իսկ երբեմն էլ՝ շատ յուրօրինակ ձեւով է մատուցում դրանք: Այդ պահից էլ զգացի, որ կյանքս լցվել էր մեծագույն սիրով՝ հանդեպ այդ ժողովուրդները ու մեծագույն ցանկությամբ՝ նրանց գոյությունը ներկայացնելու: Ես հանկարծ ընկալեցի, որ մեր շրջանում կատարելապես անհայտ կամ քիչ հայտնի քրիստոնեական ազգերի շուրջը խոսելն իմ առաքելություններից մեկն է այս կյանքում: Բազում հրաշագործություններ, բազում չարչարանքներ եւ ողբերգություններ են կապված նրանց պատմությանը ու ներկա օրերի ժամանակագրությանը:

Եվ երբ արքեպիսկոպոս նշանակվեցի Գրանադայում, հասկացա, որ Միջին Արեւելքի հետ այդքան հաջող փոխհարաբերություններ հաստատած այս վայրն ամենահարմարն էր մոռացության տրված քրիստոնեական հասարակությունների մասին ձայն բարձրացնելու իմաստով:

Գործնական առաջին քայլերից մեկը մի քանի տարի առաջ դեպի Հայաստան կազմակերպված այցելությունն էր, որի ընթացքում էլ հենց ծնվեց ցուցահանդես բացելու գաղափարը: Ձեր հայրենիքն այցելելուց հետո մենք նախ Քրիստոնեական Արեւելքի ուսումնասիրման մի ինստիտուտ ստեղծեցինք նույն Գրանադայում եւ որպեսզի հաստատության ամենօրյա աշխատանքներն ավելի արդյունավետ լինեն, ձեռնարկեցինք համապատասխան գրադարանի հիմնադրման գործը: Այս ամենը չի նշանակում անշուշտ, թե մենք լայն հնարավորությունների տեր ենք, բայց եւ այնպես, չենք դադարում հնարավորինս չափ արդյունավետ աշխատել, որպեսզի հանրությունն այստեղ իր ուշադրությունը մի պահ դարձնի դեպի մոլորակի այդ մասում ապրող եւ իր հարուստ պատմությունը կերտած ազգերի վրա:

**- Ի՞նչ աշխատանքներ էին ներկայացվել «Փառավորյալ խաչ Հայաստան» ցուցահանդեսի շրջանակներում:**

- Ցուցադրված աշխատանքներն, ըստ էության, Երեւանի Ցեղասպանության թանգարանի նմուշները կազմող լուսանկարներ են, այդ թանգարանի որոշ բնօրինակների պատճենահանումները: Բացի դրանից, տեղադրված են նաեւ տաղանդավոր նկարիչ Ժանսեմի վրձնին պատկանող ստեղծագործությունների բնական եւ նաեւ ավելի փոքր չափերի վերարտադրությունները: Իրավի, այդ նկարչությունն ինձ վրա արտակարգ մեծ տպավորություն թողեց: Ասես սրբացած պատկերներ լինեն՝ համարյա պատարագային մի շունչ կա նրանցում: Թեեւ նկարիչը հանձն էր առել այդչափ մեծ ողբերգությունը փոխանցելու, բայց նրա գործերում չես նկատի ատելության եւ ոխի որեւէ արտահայտություն: Նկատում ես, որ կտավներից մեզ նայող մարդիկ փոխանցում են իրենց ավելի մեծ սպասումները: Զարմանալի՜ է. մարդկանց դեմքերը՝ թե՛ սպանված եւ թե ցեղասպանությունից փախուստի դիմող կերպարների, նվաստացած չեն բնավ: Ճիշտ հակառակը՝ նրանք անսահման արժանապատվության տեր անհատներ են: Խոստովանում եմ, որ այս բացահայտումն ինձ հանկարծակիի բերեց: Ավելին. Ժանսեմի նկարների որոշ կերպարներն ինձ նույնիսկ... սրբապատկեր են թվում, եւ չեմ թաքցնի, որ նրանց տեսնելով՝ մինչեւ իսկ ծնկի գալու փափագ եմ զգացել:

**- Երբ կազմակերպում էիք այս ցուցահանդեսը, գիտեի՞ք արդյոք, որ Իսպանիայում ավելի քան 50 հազար հայ է ապրում: Իմ հայրենակիցներից որեւէ մեկն աջակցե՞լ է այս ձեռնարկին:**

- Աստվա՜ծ իմ, մի՞թե իրոք այդքան հայեր կան այստեղ... Մենք վստահաբար անտեղյակ էինք այդ տվյալներին, եւ նախապատրաստական աշխատանքների փուլում որեւէ հայ, բնականաբար, չի մասնակցել: Ինչպես քիչ առաջ ասացի արդեն, սույն նախաձեռնությունը պատկանում է բացառապես Միջին Արեւելքի Քրիստոնեական ուսումնասիրման ինստիտուտի Հայաստան այցելած մի խումբ իսպանացիների: Ի դեպ, խորապես ազդված այն ամենով, ինչ տեսանք ձեր հայրենիքում, այս ցուցահանդեսից մի քանի ամիս առաջ դեռեւս մենք մեկ ուրիշն էինք կազմակերպել, ներկայացնելով այցելությունից մեզ հետ ձեր երկրից բերված խաչքարերի լուսանկարները: Բացման արարողությունից առաջ փնտրում էինք, որ գոնե մի հայ դիվանագետի ներկայություն ապահովենք, բայց քանի որ ոչ ոք որեւէ ստույգ տեղեկություն չուներ, մենք ստիպված Փարիզ դիմեցինք:

Ինչեւէ. հիմա գիտենք հստակ, որ Մադրիդում գոյություն ունի հայկական դեսպանատուն, եւ իմացանք նաեւ, որ երկրով մեկ սփռված հայություն կա: Հուսամ, որ այս իսկ ցուցահանդեսը մի յուրօրինակ կապի միջոցի վերածվի՝ մեր ծանոթության ու համագործակցության համար: Ի վերջո, չէ՞ որ հայկական մշակույթն ու հայոց լեզուն մեզ չեն հետաքրքրում որպես անցյալին պատկանող թանգարանային նմուշներ: Մեզ անհրաժեշտ է շփումը իրենց լեզվով խոսող եւ իրենց գեղեցիկ ավանդույթները կրող մարդկանց հետ: Այդ իմաստով, կկամենայինք որքան հնարավոր է շատ մարդկանց հետ ծանոթության կամուրջներ հաստատել, սովորելով նրանցից այն ամենը, ինչ մենք տակավին չգիտենք:

**- Շա՞տ մարդիկ են տեսել ցուցահանդեսը: Ինչպիսի՞ տպավորություններով են այցելուները դուրս եկել սրահից, մեկնաբանություններ թողե՞լ են:**

- Հաստատապես չեմ կարող այցելուների ճշգրիտ թիվը հաղորդել: Այնուհանդերձ, հավաստիացնում եմ, որ մենք այդ ուղղությամբ քիչ բան չարեցինք: Բավարար է նշել, որ ցուցահանդեսի սրահը քաղաքում զբոսաշրջիկների առավելագույն քանակն ապահովող կենտրոնական թաղամասում է գտնվում: Բացի դրանից, իսպանական եկեղեցու «Ալֆա ի Օմեգա» ամսագիրը սույն ձեռնարկի կապակցությամբ բավական ընդարձակ մի անդրադարձ կատարեց: Ասեմ, որ անձնապես ինձ հետ շփված այցելուները խոստովանում էին. տեսածն իրենց համար միանգամայն անակնկալ էր: Ըստ իս, հիմնավոր երկու բացատրություն կա այս պարագայում: Առաջինը, որ Հայոց Ցեղասպանության փաստն, ինչ էլ ասելու լինենք, այնուամենայնիվ, անտեսված ու անծանոթ իրողությունների շարքին է պատկանում, եւ բոլորն էլ այն կարծիքին էին, որ սրահի մեջ ներկայացված գործերն ամբողջ աշխարհը պետք է տեսնի: Երկրորդ՝ ու ոչ պակաս կարեւոր հանգամանքն էլ սրահում տեղ գտած նկարների որակն է: Ասել է թե՝ այն արտահայտչականությունը, որը պարփակված է առկա լուսանկարների մեջ, հատկապես՝ Ժանսեմի գործերում, ավելորդ մեկնաբանությունների կարիք չունի:

**- Սրբազան հայր, համայն աշխարհին Հայոց Ցեղասպանության իրողությունն ի՞նչ է ուսուցանում այսօր:**

- Իմ տկար կարծիքով, բարձրացված խնդրո լույսի ներքո՝ տարբեր փաստերից զատ հարկ է ընդգծել նախ երկու երեւույթ. արդիականության փաստարկը եւ ստույգ տարածքները մենաշնորհած պետությունների եւ ազգերի որդեգրած սկզբունքները: Նշված սկզբունքների ներմուծումներն ու հատկապես Միջին Արեւելքի տարածքի մեջ դրանք վերարտադրելու փորձը բազմաթիվ ողբերգությունների կուտակման պատճառ էին դարձել, եւ մինչ օրս էլ զգալ են տալիս (օրինակ, Պաղեստինի շրջանում): Երբ ի հայտ են գալիս պետության ընկալման մեկ եղանակը եւ մեկ ուրիշ եղանակն էլ՝ քաղաքականության ընկալման համար, նման վիճակը ժողովուրդներին անխուսափելիորեն բնաջնջման եզրին է կանգնեցնում: Հայերի ցեղասպանությունը, չմոռանանք, ուղեկցվում էր նաեւ քրիստոնյա ասորիների ոչնչացման իրողությամբ, որոնց զոհերի թիվը Թուրքիայի հարավ-արեւելքում հասնում էր, եթե չեմ սխալվում, 250 հազարի: Ահա այդ կետից է սկսվում XX դարի ծրագրված եւ իրագործված մյուս եղեռնագործությունների պատմությունը: Քանզի դրանց գաղափարախոսները վստահ էին այլեւս, որ կարող են կոտորել եւ անպատիժ մնալ: Չկա որեւէ դեղամիջոց նման ահավոր դեպքերի մոռացության համար: Գոյություն չունի: Մարդիկ պարտավոր են դասեր քաղել այս հրեշավոր ծրագրերով գործի դրված սպանդների օրինակներից: Մարդկային հասարակության կատարելագործման ճանապարհին մեր մտածելակերպի մեջ պետք է անպայման ինչ-որ բան փոխել, եւ գիտակցությունն առաջին հերթին այն մտքով զինել, որ պարտավոր ենք լրջորեն մոտենալ սեփական ու օտար վայրերում ապրող ազգերի արժանապատվության պաշտպանության հարցին:

**- Ավելի քան քսան պետություններ պաշտոնապես ճանաչել են Հայոց Ցեղասպանությունը: Մինչդեռ Իսպանիան դեռ շարունակում է մնալ այն երկրների շարքում, որոնք անգամ քննարկել չեն ցանկանում այս խնդիրը: Ինչո՞ւ:**

- Ես կարծում եմ, նախ եւ առաջ լրատվության պակասի պատճառով: Խիստ անհրաժեշտություն է Հայաստանի մշակույթի եւ պատմության, այդ թվում նաեւ ցեղասպանության նյութերը Իսպանիայի ժողովրդին մատուցելը: Որքան հնարավոր է, ավելի լայն պետք է տարածվեն ձեր ազգային ավանդույթներին վերաբերող ծանուցումներն ու տեղեկությունները: Պետք չէ կորցնել եւ ոչ մի առիթ, երբ կարող եք խոսել ձեր ճարտարապետության մասին կամ առհասարակ՝ արվեստի: Պետք է ձգտել ըստ արժանվույն ներկայացնել ամենայն հայկականը, որպեսզի մարդիկ ճանաչեն ճշմարտությունը: Իսկ այդ ուղղությամբ, ինչ խոսք, սկզբից այստեղ հաստատված ձեր համահայրենակիցներն են պարտավոր ոչ մի ջանք չխնայել, որոնց միանում ենք նաեւ մենք՝ հայկական ծագում չունեցող անհատներս, որոնք պատմական ճշմարտության վերահաստատումից բացի, որեւէ այլ շահ չեն հետապնդում:

Հավատացեք, որ պատմական ճշմարտության վերականգնումն արդյունավետորեն նպաստում է այն գործընթացին, որի նպատակն է ցեղասպանության արգելումը:

**- Խոսե Անտոնիո Գուռիարանն առաջարկեց Ձեզ այս ցուցահանդեսը շրջիկ դարձնել, որպեսզի անցնի Իսպանիայի բոլոր խոշոր քաղաքներով: Ընթացք տրվե՞լ է այդ առաջարկին:**

- Եթե ինձանից կախված լիներ՝ մեծ հաճույքով: Ուրախ կլինենք միայն, եթե նման մի հնարավորություն ստեղծվի: Նշեցի, որ մեր անձնական միջոցները շատ քիչ են: Ինչ էլ որ արել ենք մինչ այժմ, արել ենք մեծ սիրով հանդեպ հայ ժողովուրդն ու նրա հարուստ մշակույթը:

Մեր ավանդույթներն արդեն իսկ նույն արմատների խորքերից են, եւ դա փոխադարձորեն պարտադրում է, որպեսզի մեր կապերն ավելի ամուր լինեն ու իսպանացիներս ճանաչողի աչքերով գնահատենք մի այնպիսի հրաշալի եկեղեցի, որպիսին հայկականն է ու բազում իրադարձություններով լի մի այնպիսի պատմություն, որը դուք եք կրում: Ողջ մարդկության համար անսահմանորեն մեծ մի բարիք է ձեր ազգի անցյալից ու ներկայից գաղափար ունենալը:

ԱՐԹՈՒՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Իսպանիա

*Տպագրվել է նաեւ «Օրեր» ամսագրում*

## ԼՈՒՐԵՐ

### Հայկական համագումարի նոր տարվա հավաքը Կալիֆոռնիայում

**Այս տարի Դավիթ եւ Մարգարիտ Մկրուբյանների տունը Փասադենայում ընտրվել է որպես հավաքատեղի Նոր տարվա առթիվ իրար շնորհավորելու եւ հետագա անելիքների քննարկումներ անցկացնելու համար, տեղեկացնում է Հայկական համագումարի լրատվական կենտրոնից ստացված հաղորդագրությունը: Հանդիպումը տեղի է ունեցել հունվարի 9-ին: Համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին, վարչության անդամներ Լիզա Գալստյանն ու Փիթեր Կեզիրյանը, ինչպես նաեւ Հարավային Կալիֆոռնիայի շրջանային խորհրդի անդամներ Էլ Կաբրալովը, Թալին Յագուբյանը, Ջեյմս Մելիքյանն ու Մարգարիտ Մկրուբյանը ողջունել են ավելի քան հարյուր հյուրերին եւ շնորհակալություն հայտնել նրանց՝ աջակցության համար: Հյուրերի թվում են եղել Փասադենայի քաղաքային խորհրդի նախագահ Ժակ Ռոբինսոնը, Գլենդեյլի քաղաքապետ Արա Նաջարյանը, Փասադենայի քաղաքապետ Բիլ Բուգարդն ու կինը եւ «Արմինյն օբսերվեր» թերթի խմբագիր Օշին Քեշիշյանը: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգել են Տուսոնում (Արիզոնա) մի օր առաջ կատարված ահաբեկչության զոհերի հիշատակը եւ շուտափույթ ապաքինում մաղթել կոնգրեսական Գաբրիել Գիֆորդսին:**

### Բոստոնում ցուցադրվում է «Գոհար» գորգը

**Բոստոնի Գեղարվեստի թանգարանում բացված «17-րդ եւ 18-րդ դարերի կովկասյան գորգեր» ցուցահանդեսում, որը տեւելու է մինչեւ հունվարի վերջը, ցուցադրվում է աշխարհի ամենակարեւոր հայկական «Գոհար» գորգը, որը գործվել է 1680 կամ 1700 թվականին, տեղեկացնում է «Ամերիկայի հայկական գրադարան եւ թանգարան» կազմակերպության լրատվական գրասենյակից ստացված հաղորդագրությունը:**

**Այդ գորգը կապող օղակ է միջնադարյան «Դրակոնյան գորգերի» եւ «Ժամանակակից գորգերի» ավանդական գործելաոճերի միջեւ: Դրա վրա գրված մակագրությունը նշում է, որ Գոհար անունով իրեն մեղավոր եւ հոգեպես թույլ համարող մի կին այն գործել է իր սկսնակի մատներով, եւ ով կկարդա այդ գրությունը, «Թող Աստծո մոտ բարեխոսի իր համար»:**

**Գորգը առաջին անգամ, ըստ հաղորդագրության, հայտնվել է Լոնդոնում 1899-ին որպես Թուրքիայի հայկական եկեղեցիներից մեկից գողացված ավար 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ: Ցուցադրվել է եւ վավերականացվել, բայց հետո անհայտացել է տասնամյակներ շարունակ եւ միայն 1977-ին վերստին հայտնվել անձնական հավաքածուների շարքում: 1985-ին ցուցադրվել է «Ջուլհակագործներ, առեւտրականներ եւ թագավորներ» շրջիկ ցուցահանդեսում:**

### ՀԲԸՄ-ի «Նուբար ճամբարի» ձմեռային հավաքը

**Ձյունն ու եղանակային անբարենպաստ պայմանները չեն խանգարել, որ հունվարի 8-ին ավելի քան 80 ճամբարականներ, խորհրդատուներ եւ ՀԲԸՄ-ի նախկին սաներ հավաքվեն Ֆեր Լոունի (Նյու Ջերսի) Սբ Լեւոն հայկական եկեղեցում՝ վերհիշելու Քեթսկիլ լեռներում անցկացրած անցյալ տարվա ամառային օրերը եւ ծանոթանալու այս տարվա նոր ծրագրերին: Ցուցադրվել է տեսաֆիլմ, որը ցնծություն է պատճառել ներկաներին: Երեխաներին հնարավորություն է ընձեռվել ստեղծագործական խաղերով զվարճանալու:**

Հ. Ծ.

ԼԻԲԱՆԱՆ

# Պարզապէս միջոց

Լիբանանեան քաղաքական բեմը յատկանշած քաղաքական լարուած իրավիճակը, անհեռանկարային կացութիւնն ու մանաւանդ մօտ ապագային նկատմամբ տիրող անորոշութիւնը տագնապի մատնած են լիբանանցի քաղաքացին: Ընթացիկ գործեր վարող հրաժարեալ կառավարութեան գործունէութիւնը, խորհրդարանական պարտադիր խորհրդակցութիւնները յետաձգման փաստը կը յուշեն համաձայնական մթնոլորտի բացակայութիւնը:

Անորոշ այս կացութիւնը տեղի տուած է յոռետեսական մեկնաբանութիւններու, ինչ որ բարոյահոգեբանական առումով լուրջ հարուած հասցուցած է լիբանանեան հասարակութեան: Որքան ալ կառավարական ընթացիկ աշխատանքները փորձեն բնական կենցաղի եւ առօրեայի տպաւորութիւնը պահել, յստակ է, որ պողոտաներու վրայ երեւցող համեմատական ամայացումը, տնտեսական գործարքներու տակաւ սառեցումը, երկիրը տեղափոխած են քաղաքական լարուածութեան համապատասխանող տագնապի երեւոյթներով յատկանշուող յստակ դաշտ:

Արտաքին ճակատի վրայ միջնորդ պետութիւններու կողմէ յայտարարուած հիասթափութիւնն ու առաջադրուած համաձայնութեան գործընթացէն հրաժարումը եթէ մէկ կողմէ կ՛ընդգծեն ներլիբանանեան հանգոյցին խորապէս բարդ ըլլալը, միւս կողմէ քաղաքականօրէն կը մեկնաբանուին հիմնական երկրի մը միջնորդութիւնը այլ երկիրով փոխարինելու փաստը: Մէկուն ձախողութեան ձգած պարապը միւսով լեցնելու իրականութիւնը:

Աւելի պարզ բացատրութեամբ՝ Սէուտական Արաբիան հիմնականին մէջ կը փոխարինուի Թուրքիայով: Նոր միջնորդը այս պարագային Թուրքիան է, տրուած ըլլալով որ թէ՛ Քաթարը եւ թէ՛ Սուրիան արդէն հանգուցալուծման բանակցութիւններու գործընթացին մաս կը կազմէին: Բոլորովին նոր չէ անշուշտ Թուրքիոյ միջնորդութիւնը, որուն ներկայութիւնը շրջանին եւ երկրին մէջ, բազմակողմանի հանդիպումները, հակաիսրայէլեան տրամադրութիւններու թատերական ներկայացումները բաւական լուրջ ու նկատառելի ենթահող պատրաստած էին այդ ուղղութեամբ:

Չմոռնանք, որ սուրիական-սէուտական հաւանական համաձայնութիւնը խափանուած էր Միացեալ Նահանգներու կողմէ: Թէ Թուրքիան ո՞րքանով կը համաձայնեցնէ իր քայլերը Միացեալ Նահանգներու հետ եւ թէ այս վերջինը նոյն դերակատարութիւնը կ՛ունենա՞յ այս անգամ թրքական միջնորդութեամբ լուծելի տարազի մը իրականացման մէջ, դժուար է կանխաւ բացարձակ հաստատում կատարելը: Իրադրութիւնները սակայն այնպէս ցոյց կու տան, որ թրքական միջնորդութիւնը նկատառելիօրէն ընկալելի է առնչուած տարբեր կողմերուն համար:

Թրքական այս քայլերը եւ ընկալելիութեան երեւոյթները պէտք է դիտարկել պատշաճական Անգարայի նոր օսմանականութեան ընդհանուր քաղաքականութեան շրջագիծին մէջ: Դէպի արաբական աշխարհ կտրուկ թեքումը եւ թրքական քաղաքական հովանաւորութիւնը շրջանին մէջ առաւելագոյնս տարածելու փորձերը առարկայացման համար ամենապատեհ առիթներէն է լիբանանեան հանգուցալուծման մէջ առանցքային դերակատարութիւն ստանձնելն ու ընդունուած միջնորդ համարուիլը:

Նոր օսմանականութեան անհեռանկարայնութեան մասին յստակ շեշտադրումներով եւ քաղաքական պարզաբանումներով հանդէս եկաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահը Լիբանանէն ոչ շատ հեռու Կիպրոսի մէջ, ուր ամենաբարձր ամպիոններէ ան յաջողեցաւ ճիշդ երանգները մատնացոյց ընելով խօսիլ թրքական նորօրեայ գաղափարախօսութեան դատարկութեան մասին: Յիշեցնելով, որ շրջանի ժողովուրդները ինչ տեսակ հետեւանքներ կրած են օսմանականութենէն:

Նոր միջնորդին համար ո՛չ լիբանանեան հանգոյցը, ո՛չ լիբանանցիներուն խաղաղ համակեցութիւնը, ո՛չ ալ շրջանին կամ երկրին կայունութիւնը գերադասելի առաջադրանքներ են: Հակամարտութեան թղթածրարին մէջ բանալի դեր ստանձնելը պարզապէս միջոց է նոր օսմանականութեան համար ենթահող շահելու:

ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ
Պէյրութ, «Ազդակ»ի գլխաւոր խմբագիր

# Роснефть-BP համաձայնագիրը մտահոգում է ԱՄՆ-ին

Դեմոկրատ կոնգրեսական Էդվարդ Մարկին ֆինանսների նախարար Թիմոթի Գայթներին խնդրել է քննություն սկսել Роснефть եւ BP նավթային ընկերությունների կնքած համաձայնագրի օրինականությունը ստուգելու նպատակով: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Մարկին մասնագիտացած է էներգետիկայի եւ բնապահպանական հարցերում: Նրա կարծիքով, բաժնետոմսերի փոխանակման հետ կապված 16 մլրդ դոլարանոց գործարքը կարող է սպառնալ ԱՄՆ ազգային անվտանգությանը: Կոնգրեսականի նամակում նշվում է, որ BP-ն ԱՄՆ-ում նավթի եւ բնական գազի խոշորագույն արդյունահանողն է, ինչպես նաեւ 4-րդ տեղն է զբաղեցնում նավթամթերքների արտադրության ծավալով: Բացի դրանից, բրիտանական ընկերությունը ամերիկյան բանակի վառելիքի խոշորագույն մատակարարն է:

Մարկին կարծում է, որ եթե Роснефть-ը դառնա BP-ի բաժնետեր եւ սկսի ազդել ընկերության քաղաքականության վրա, դա կարող է վնասել ԱՄՆ-ի շահերին: Ռուսական ընկերությունն արդեն ցուցադրել է վեճերի ծագման դեպքում մատակարարումները դադարեցնելու ունակությունը: Օրինակ, 2009-ին ընդհատվեց Ուկրաինայի գազամատակարարումը:

Բրիտանական եւ ռուսական նավթային ընկերությունների խոշոր գործարքի մասին հայտնի դարձավ 2011-ի հունվարի 15-ին: Համաձայնագրով նախատեսվում է Ռուսաստանի արկտիկական ծանծաղուտի համատեղ յուրացում, ինչպես նաեւ բաժնետոմսերի փոխանակում: Роснефть-ը կստանա BP-ի բաժնետոմսերի 5 տոկոսը, փոխարենը տալով սեփական բաժնետոմսերի 9,5 տոկոսը:

# «Ֆաթհը» արաբներին հորդորում է տներ կառուցել Արեւելյան Երուսաղեմում

Պաղեստինյան «Ֆաթհ» շարժման առաջնորդներից Հաթեմ Աբդել Քադերը, որը պատասխանատու է «երուսաղեմյան թղթածրարի» համար, Արեւելյան Երուսաղեմի բնակիչներին կոչ է արել շինարարության թույլտվություն չսպասել Իսրայելի իշխանություններից:

Աբդել Քադերի խոսքերով, զանգվածային անօրինական շինարարությունը Արեւելյան Երուսաղեմում Իսրայելի կողմից արաբների տների քանդման եւ հրեաների բնակեցման լավագույն պատասխանը կդառնա:

Նա ընդգծել է, որ խոսքը ժողովրդագրական դիմակայության մասին է, ուստի պաղեստինցիները չպետք է սպասեն Իսրայելի իշխանությունների թույլտվությանը:

Newsru.co.il կայքը հաղորդում է, որ Շարմ ալ Շեյխում (Եգիպտոս) օրերս կայացած Միջարաբական տնտեսական կոնֆերանսում Պաղեստինյան ինքնավարության վարչապետ Սալիմ Ֆայյադը արաբական երկրներից 430 մլն դոլար օգնություն է խնդրել:

Այդ գումարից 125 միլիոնը նախատեսված է Արեւելյան Երուսաղեմում արաբների տների կառուցման համար: Երուսաղեմի արաբական թաղամասերում զբոսաշրջության զարգացման նպատակով պետք է հատկացվի 127 մլն դոլար:

# Մեքսիկայում ձերբակալվել է «Զետաս» թմրակարտելի հիմնադիրը

Մեքսիկայի ոստիկանությունը ձերբակալել է երկրի խոշորագույն թմրակարտելներից մեկի՝ «Զետասի» հիմնադրին՝ 35-ամյա Ֆլավիո Մենդես Սանտյագոյին: Օախակա քաղաքի մոտակայքում նա ձերբակալվել է իր թիկնապահի հետ:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ Սանտյագոյի ձերբակալմանը նպաստող տեղեկությունների համար Մեքսիկայի կառավարությունը խոստացել էր 15 մլն պեսո (1,2 մլն դոլար) պարգեւավճար:

«Զետաս» կարտելը հիմնել են Մեքսիկայի հատուկ ծառայությունների նախկին աշխատակիցները: «Զետասը» գաղտնաբառ է, որ ոստիկանությունն օգտագործում է երկրի իրավապահ մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներին մատնանշելու նպատակով:

Ոստիկանության տվյալներով, Սանտյագոն կարտելում պատասխանատու էր կենտրոնամերիկացի եւ հարավամերիկացի անօրինական գաղթյալներին Մեքսիկա-ԱՄՆ սահման հասցնելու համար: «Զետասը» մեղավոր է 2010-ի օգոստոսին 72 գաղթյալների սպանության մեջ: 2010-ի դեկտեմբերին Մեքսիկայում անհետ կորել են 40 գաղթյալներ, որոնց «Զետասը» պետք է հասցներ ԱՄՆ սահման:

Սանտյագոյի անձնական վերահսկողության տակ էին նաեւ Կենտրոնական Ամերիկայի երկրներից թմրադեղերի առաքման հիմնական երթուղիները:

ՆՈՐԻՑ

# Օբաման ուզում է վերընտրվել



**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման մտադիր է վերընտրվել 2012-ի նախագահական ընտրություններում: Նրա ծրագրերի մասին պատմել է Սպիտակ տան մամլո քարտուղար Ռոբերտ Գիբսը: Առաջիկա ամիսներին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը կպատրաստվեն նախագահական ընտրություններին Օբամայի մասնակցության հայտ ներկայացնելու համար:**

**Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Օբաման որոշել է իր նախագահական ընտրարշավի կենտրոնակայան դարձնել Չիկագոն եւ վարչակազմի ղեկավարի տեղակալ Ջիմ Մեսսինային նշանակել ընտրարշավի ղեկավար:**

**Փորձագետները կարծում են, որ դեմոկրատների թեկնածու Օբամայի վերընտրության օգտին գլխավոր փաստարկներ կդառնան առողջապահության բարեփոխումը, Իրաքից ամերիկյան զորքի դուրսբերումը, Աֆղանստանում ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը, համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում Օբամայի վարչակազմի ձեռնարկած գործողությունները:**

**Հանրապետականների գլխավոր հակափաստարկներից մեկը կարող է դառնալ գործազրկության համեմատաբար բարձր մակարդակը (9,4 տոկոս), որը, կանխատեսումների համաձայն, բարձր կմնա նաեւ 2012-ին: Փորձագետների կարծիքով, հանրապետականները դեմոկրատներին կմեղադրեն պետական փողերի շռայլման մեջ:**

**Հանրապետականների ճամբարում նախագահության առավել հավանական թեկնածուներ են համարվում Մասաչուսեթսի նախկին նահանգապետ Միտ Ռոմնին եւ Մինեսոտայի նախկին նահանգապետ Թիմ Պոլենտին:**

**Wall Street Journal թերթի եւ NBC News հեռուստաընկերության անցկացրած վերջին հարցման տվյալների համաձայն, պետության ղեկավարի պաշտոնում Օբամայի գործողություններին հավանություն է տալիս ամերիկացիների 53 տոկոսը, որ 8 տոկոսով բարձր է 2010-ի դեկտեմբերյան ցուցանիշից:**

# ԱՄՆ-ում ջախջախիչ հարված իտալական մաֆիային

## *Բայց առկա են փոխարինողներ*

**Նյու Յորքում, Նյու Ջերսիի եւ Ռոդ Այլենդի նահանգներում ոստիկանության, ՀԴԲ-ի եւ հատուկ ծառայությունների ավելի քան 800 գործակալների անցկացրած համատեղ գործողության ընթացքում վերջին մեկ օրում ձերբակալվել են մաֆիական խմբավորումների 120 անդամներ, այդ թվում՝ առաջատար կլանների պարագլուխներ: Ձերբակալվածներին կասկածում են դրամաշորթության, սպանությունների, թմրադեղերի տարածման եւ անօրինական խաղատների ստեղծման մեջ: Այդ մասին հաղորդում է NBC հեռուստաընկերությունը:**

**Կասկածյալների մեծ մասը պատկանում է Գամբինո, Ջենովեզե, Լուկկեզե, Բոնաննո, Կոլոմբո եւ Դեկավալկանտե կլաններին, որոնք համարվում են Նյու Յորքի եւ շրջակայքի ստվերային տնտեսության «տերերը»:**

**Հիշյալ հատուկ գործողությունը ԱՄՆ-ում խոշորագույնն էր հակամաֆիական պայքարի պատմության մեջ եւ ջախջախիչ հարված հասցրեց իտալական մաֆիային:**

**Վերջին տարիներին ԱՄՆ իրավապահ մարմինները մաֆիայի դեմ պայքարում են իտալացի գործընկերների հետ համատեղ՝ իտալացի եւ ամերիկացի մաֆիականների սերտացող կապերին ի պատասխան: La Repubblica թերթի տեղեկությունների համաձայն, ԱՄՆ-ում 120 մաֆիականների ձերբակալությանն էապես նպաստել է ավելի վաղ ձերբակալված Բոնաննո կլանի փոխպարագլուխ Սալվատորե Վիտալեն, որը ցմահ բանտարկության դատավճիռը մեղմացնելու նպատակով գործակցում է իրավապահների հետ:**



**120 մաֆիականների ձերբակալությանն անդրադառնալով՝ թերթը գրում է. «Իտալական ծագումով քրեական խմբավորումները ԱՄՆ-ում 1957-ից ի վեր նման հուժկու հարված չէին ստացել: Այս վերջին հարվածից մաֆիան հազիվ թե ուշքի գա, համենայն դեպս չի վերածնվի իր ավանդական տեսքով»: Սակայն իտալական մաֆիային կարող են փոխարինել ԱՄՆ-ում արդեն արմատավորվող ուրիշ խմբավորումներ: «Ամերիկայում հաստատվում են ռուսական մաֆիան, կոլումբիացիների, ճամայկացիների, չինական տրիադներ, ճապոնական յակուձաներ: Այդ հանցախմբերը կարող են նոր անդամներ հավաքագրել ներգաղթյալների շարքերում», եզրակացնում է թերթը:**

# «Սահման» Ֆիլմի մասին

## ՀՀ նախագահի մրցանակին ներկայացնելու առիթով



Արդար կլինի, եթե աշխարհի բազմաթիվ հեղինակավոր ֆեստիվալներում բարձր գնահատանքի եւ տիտղոսների արժանացած գործը վավերացվի իր իսկության մեջ Հայաստանի մրցանակներից ամենաբարձրի կնիքով, անշուշտ, ելնելով հիմնավոր այլ պատճառներից եւս:

Նախ, եթե ճշմարիտ է, որ արվեստագետ մարդը իր ժամանակի տարեգրությունն է՝ իր գործի մեջ հայելացած ապրումներով, խոհերով, աշխարհից ու մարդուց վկայություն տվող իր պատկերացումներով, ապա Հարություն Խաչատրյանը վավերական է եւ ավելի քան արժանահավատ: Իրականությունը ներկայացնել այնպես, ինչպես կա՝ հավատալով, որ նյութի պատկերն իր ակներեւությամբ խոսուն է եւ անսպառ, եւ վստահ, որ այդ խոնարհությունը լիովի փոխհատուցում կբերի իր «զոհողության» դիմաց: Ահա ձեւաստեղծման այն եղանակը, որ կինոռեժիսորի ոճն է, նրա հավատամքը: «Արվեստ» չբանեցնել, չօգտվել նյութից՝ հանուն գաղափարների, հանուն պրոֆեսիոնալ մի վարպետության, որի հմայքը երբեմն ստվերում է ճշմարիտը հասկանալու եւ վերապրելու դառնությունը:

Այդ ճշմարիտը պատերազմն է, իբրեւ չարիք, իբրեւ մարդու դեմ ուղղված ամենաասոսկալի գործիք, որը ռեժիսորը ներկայացնում է առանց ուղղակի պատկերավորման նյութ դարձնելու. չկան պատերազմական տեսարաններ, իրար դեմ ելած թշնամիների բախում, արյուն եւ մահ: Արհավիրքի պատկերը ռեժիսորը կերպավորում է իբրեւ աներեւույթ աղետ, որ տնավեր է արել մարդկանց, համրացրել, պոկել ժպիտը նրանց դեմքերից եւ դարձրել գերի երկնքից լսվող հռնդյունին, որ երեւակվում է էկրանին իբրեւ հեռվում մերթընդմերթ հողը խոցոտող պայթյուն, որից վեր ելնող փոշին խախտում է տագնապալի լռության մեջ շունչը պահած տարածքի անդորրը:

Սակայն այս ամենով հանդերձ ռեժիսորի համար ճշմարիտը այս փաստը չէ, այլ վերջինիս խորքում կուտակված պատճառների ու հետեւանքների խուռն ու հանգուցախեղդ այն իրողությունը, որը տարուբերվում է ակնառու ու անխաթար պահված փաստի թիկունքին, որն իրականության առջեւ կանգնած արվեստագետի հոգին խռովող միտքն է, զգացողությունը, որը ձգտում է հաղորդության բերել տեսանելի ու զգայելի իսկությունները՝ կանխապես իմանալով, որ մի տառապալի որոնում է դա՝ սիզիֆյան ելքով:

Եվ ամենի՝ էականի այդ որոնումին հետամուտ՝ բանաստեղծի ասած «Ճշմարտության հոգու անունով եւ բարի կամքով» ռեժիսորի՝ պատումն ի տես դնող ռակուրսը դառնում է միակ նայող ու տեսանող աչքը ֆիլմում, քանզի այստեղ մարդիկ՝ անանուն, անես, լուռ եւ ներփակ են, կապերը խզված են, հայացքներն անհասցե, զգացումները՝ ջնջված, կա լոկ գլխահակ, իմքնահոս կեցության մի անհույզ ընթացք:

Ռեժիսորի աչքը այդ աշխարհի նախասկիզբ ժամանակների բնակչի վերադարձն է, աղետից հետո, որ շրջում է այդ տարածքում, սեւեռուն ու ակնդետ հայացքով զննում, հետեւում ամեն ինչի եւ ամենքին՝ գտնելու եւ ի տես դնելու այդ հոգեւոր խորտակման պատճառը: Իսկ ֆիլմին շունչ տվող ծորուն ռիթմը դառնում է հիշողության հրահրման տարածք, նրա արթնանալուն վերապահված ժամանակ, ուր եւ ծավալվում, ուռչում են դրվագների մեջ փակված իմաստներն ու հույզերը: Իսկ դրվագները՝ իրենց նմանությամբ ու կրկնվող հերթագայումով, տեղեկատվական սուղ բովանդակությամբ, իբրեւ կյանքից պոկված բեկոր, նշանի բնույթ են ստանում: Հարություն Խաչատրյան ռեժիսորը, կարծես, ոգեկոչում է հնամենի անանուն վարպետների փորձը՝ առասպելաբանական պատկերացումներով զգալու, տեսնելու, ընկալելու այն կերպը, որը ոչ թե պատկեր էր արարում իրականից, այլ իրականը չէր տեսնում այլ կերպ, քան իբրեւ պատկեր:

Սյուժեն ռեժիսորի համար այլեւս պատմելու եղանակ չէ, այլ աշխարհընկալման փաստ: Մարդն ու կենդանին, թեեւ բնույթով տարբեր, բայց միեւնույն են իբրեւ Աստծո արարածներ: Ֆիլմի տեսողական շարույթի մեջ կենդանու եւ մարդու պատկերները համազոր են՝ կառուցման սկզբունքով եւ հերթագայումով, անգամ կեցվածքով: Նրանք փոխհարաբերվում են թե եւ կապով, թե նաեւ բայց-ով, իսկ-ով՝ երբեմն հակադրվելով, երբեմն համադրվելով, երբեմն հավասարացվելով միմյանց: Հանդարտ ու հետեւողական՝ ռեժիսորը ստեղծում է նրանց իմքնության հայելային սիմետրիա, չափային մի հարաբերակցում, որով մերձենում են նրանք՝ իբրեւ խախտված միասնականի տրոհված մասեր, որ հիմա կանգնած են դեմառդեմ իբրեւ ախոյան, լինելով երկուստեք արհավիրքի զոհ:

Իրադրության նախաշերտերում հառնում է նախաստեղծ առասպելների հիշեցումը, հողի պատմությունը, ասքը մարդկային համայնքի եւ կենդանիների հոտի այն լինելության, որ պարզապես գոյատեւում է մահվան ստվերի մշտառկա ներկայությամբ: Կենդանու ընդվզումի կերպը ի ցույց է դնում օտարի, «թշնամու» դաժանության չափը: Երկուստեք բռնի տեղահանվածների՝ մարդու եւ կենդանու կիրքը՝ մեկի ապրելու, մյուսի փրկվելու, դառնում է կորսված տարածքի արժեքի հայելացումը, այդ տարածքը դարձնելով ֆիլմի գործողության անտեսանելի մասնակից՝ իբրեւ աշխարհի վիճակ:

Իսկ իրավիճակը, որ ի տես է դնում ռեժիսորը, մարդու հոգու ներսում պատահած ավերումն է, ուր սյուներն են խախտված, այդտեղ, այդ խորքերում է սուզված ռեժիսորի աչքն ու հոգին, այդ մռայլ պատյանի ներսը, որի պատկերն ավելի հուսահատեցնող է, ավելի փշապատ, քան այդ տարօրինակ տարածքի ծայրին, փշալարերից անդին ցցված աշտարակի բութ աչքը: Վերջացել է «եզո ջան, ախպեր ջանը», խզվել են եղբայրության կապերը, նրանցից ամեն մեկը մյուսին հակասող սկիզբն է, բնական նույնքան, որքան միմյանց ջնջող ձմեռն ու գարունը, կյանքն ու մահը, լույսն ու մութը: Որքան հուսահատեցնող է պատկերը, նույնքան հզոր է այդ պատկերի արմատին հասնելու, պատճառը պեղելու եւ դարմանելուն ուղղված արվեստագետի հորդորը՝ ցավի արմատը, ցավի սիրտը բանալու եւ փրկության կանչը ձայնելու ու լսելի դարձնելու կամքը:

Ռեժիսորը մոտեցնում է կամ մոտենում է կենդանուն, որը լսում, տեսնում, զգում է իրեն մորթողի պատրաստ դանակն ու շունչը, որն առանց ֆանտաստիկ կերպափոխումների ձայնում է՝ անբառ, բայց ավելի քան հասկանալի, իբրեւ «ձայն բարբառոյ հանապատի», իբրեւ կամք վերահայտնաբերելու կյանքի ու լինելության խորհուրդն ու նախաստեղծ կերպը: Կենդանու «խոսքն» ու վարքը՝ այսօր մոռացված արժեքները վերագտնելու միամիտ, բայց տագնապած կանչն է ու կոչը, մարդու՝ ծուղակն ընկած անպաշտպանությունն է, անօգնականությունն է՝ բռնության հանդիման, կորած ուրբությունների հիշեցումը, իբրեւ ինքնափրկության եւ դիմացինի փրկության կոչ:

Այս է արվեստագետի հորդորը ֆիլմում, որ տրոփում նրա ամեն մի կադրում, իբրեւ համառ հիշեցում ու լուռ ահազանգ, եւ դրվագից դրվագ թանձրանում է անշտապ ռիթմով:

Ֆիլմում պատկերվածը՝ առօրյա մանրամասների մեջ, դրվագների կրկնությամբ, ռեժիսորը տարալուծում է ընկալման՝ սահման չճանաչող կոնտեքստի մեջ, այն իմաստավորում է իբրեւ մոգական շրջան, որի խորհուրդը իրապատումից, տեսանելիից անդին է, որն ընկալվում է իբրեւ հնագույն նախադեպի հիշեցում, այն հավիտենական փակուղային իրավիճակի վկայություն, որի պատճառը Մարդու մեջ պահ մտած, նրան հետապնդող՝ բանաստեղծի խոսքով ասած, «բերանն արնոտ Մարդակերի» ուրվականն է:

Ֆիլմի ամբողջ ընթացքում ռեժիսորը դիտողին ներքաշում է այս մտածումի մեջ՝ հավատացած, որ ֆիլմը իսկական կեցություն կարող է ձեռք բերել, եթե դիտողը հաղորդություն առնի միֆոլոգիական այս պարադիգմի մեջ, երբ անցյալը կենդանանում է՝ ներկայի ակնառու պահի հետ հարաբերակցվելով: Եվ ի սկզբանե փաստացի որոշակիությունից զերծ պահած պատումը հոգեւոր հեռապատկեր է բացում, որի մեջ տարալուծվում, անկարեւոր են դառնում բոլոր ժամանակների քաղաքական, հասարակական ճգնաժամերը բացատրող՝ ե՞րբ, որտե՞ղ, ովքե՞ր, ինչո՞ւ հարցերին տրվող պատճառաբանությունները:

Այս մտածումն է, որ ֆիլմում միապաղաղ ընթացող կյանքը պատկերանում է իբրեւ գոյատեւման մղձավանջ, ուր մարդկային ցավը կենդանին է ձայնում, իբրեւ տառապանքից ծնված կենդանի խիղճ: Այս առճակատման մեջ պարտվել նշանակում է վճարել կյանքով, նաեւ սա է ֆիլմի հարուցած խորունկ մտածումը: Բնությունն է հաղթում ի վերջո՝ ծնունդ , որն, արդյոք, չունի ապագա, վախի զգացում նորածնի համար:

Ֆիլմի սյուժեն կրկին հրահրում է միֆական պերսոնաժների վերհուշը, իրական պատկերների, գործող անձանց նշանայնությունը: Այս գոմեշը՝ իր երբեմնի սրբազնացած ցեղակից ցուլի նման, մեղքը մաքրագործելու, աշխարհի կարգը պահպանելու համար պահանջված զոհն է, որ մարմնավորում է մահն ու վերածնունդը: Եվ իբրեւ այդպիսին ինքը փոխակերպվում է զոհաբերողի եւ չի լքում այս աշխարհն առանց իրեն փոխարինողի:

Քամու սոսափից օրորվող խոտերի մեջ, կյանքի ու մահվան սահմանի փշալարերի արանքում, ուր մլլում է ճահիճը ու հարթավայրի վրա եղեգներից վեր ելնող ծխացող քուլաները օդում սահում են մոլար, մի վայր, որպիսին հնուց անտի պատկերացվում էր մեռնող աստծու ողբի տունը, թախծի ու տառապանքի տիրույթը, նորածին ցլիկը հառնում է իբրեւ տեսիլք, իբրեւ երերուն ոտքերի վրա տարուբերվող անպաշտպան մի հույս:

**ԱՆԵԼԿԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն**

***Խմբ.***-*Վաղը, հունվարի 23-ին, ժամը 23.40-ին, ռուսական Культура հեռուստաալիքի Культ Кино հաղորդաշարը կցուցադրի Հ. Խաչատրյանի «Սահման» ֆիլմը:*

---

Ո՛Վ Ո՛ՒՄ ՀԵՏ

# «Շողակաթը» կհեռարձակվի «Արարատի» հաճախականությամբ, «Արարատի» ճակատագիրն էլ մշուշոտ է

Այս տարի ՀՌԱՀ կայացրած որոշումները ոչ միայն աբսուրդ էին, այլեւ անհասկանալի: Մինչ երեկ բոլորը կարծում էին, որ «Շողակաթն» ու «Արարատ» հեռուստաընկերությունները միավորվում են, ստեղծելով մեկ միասնական կրոնա-մշակութային հեռուստաալիք: Սակայն պարզվում է, որ ՀՌԱՀ կայացրած որոշման համաձայն «Շողակաթը» հեռարձակվելու է «Արարատ» հեռուստաընկերության հաճախականությամբ: Թե ՀՌԱՀ-ն ինչ է որոշելու միակ մշակութային հեռուստաալիքի կապակցությամբ՝ հայտնի չէ: «Արարատի» հետագա ճակատագրի վերաբերյալ տեղյակ չէ անգամ հեռուստաալիքի տնօրեն, գրող հրապարակախոս **Մերուժան Տեր-Գուլանյանը**: «Եթե հաստատ իմանայի, թե ինչ է կատարվում, կասեի: Արդեն մեկ ամիս է, անորոշ վիճակ է, Արարատի հետագա կարգավիճակը մշուշոտ է: Ես ոչինչ չգիտեմ», «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց նա:

«Շողակաթ» հեռուստաընկերության տնօրեն **Մանյա Ղազարյանն** էլ ասաց, որ ՀՌԱՀ հանձնաժողովի կայացրած որոշման արդյունքում հեռուստաընկերությունն իր արտադրանքը կհեռարձակի Հանրային հեռուստաընկերությունից: «Այսուհետ Շողակաթը իր հեռուստածրագրերը կտեղադրի 48 հաճախականության վրա: Այո՛, դա «Արարատի» հաճախականությունն է: Մենք անում ենք այն, ինչ կա որոշման մեջ», ասաց նա:

Եթե «Արարատ» հեռուստաընկերությունը հրաժեշտ տա եթերին, ապա որոշման հետեւանքով ստեղծագործական կազմի 44 աշխատակից կհամալրեն գործազուրկների բանակը: Կատարյալ անորոշությունը չի կարողացել հասկանալ անգամ Հանրային խորհուրդը: Նրանց հասել են խոսակցություններ, որ «Արարատի» անձնակազմը աշխատանքից ազատման դիմումներ է գրում: Չկարողանալով որեւէ բան պարզել, Հանրային խորհուրդը որոշել է մեկ հարկի տակ հավաքել խնդրով հետաքրքրվող բոլոր կողմերին եւ քննարկել «Արարատի» հարցը:

Այսօր ժամը 3-ին Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի կունենա Հանրային խորհրդի նիստ: «Մշակութային ալիքը չի կարելի փակվել: Մեր հեռուստալսարանին անհրաժեշտ է՛ւ կրոնական ե՛ւ մշակութային հեռուստաալիք: «Արարատը» հրաշալի այլընտրանք է այն բոլոր խեղաթյուրումներին, որոնք ցուցադրվում են այսօր եթերով», ասաց Հանրային խորհրդի անդամ **Աստղիկ Գեւորգյանը**:

Նրա ներկայացմամբ՝ ոչ միայն Հանրային խորհրդի ողջ կազմը, այլեւ բազմաթիվ մտավորականներ, հասարակական գործիչներ մտահոգված են ու դժգոհություն են հայտնել միակ մշակութային ալիքի փակման կապակցությամբ:

Թե ինչպես է գնահատում հեռուստաալիքների ծրագիրն ու արտադրանքը ՀՌԱՀ հանձնաժողովը՝ չափազանց դժվար է պատկերացնել: Բյուջեից սնվող Հանրայինի եթերում քիչ են բարձր մակարդակի մշակութային հաղորդումները: Կամ Աշոտ Ղազարյանն է արդեն հնացած հումորներ անում կամ տեղական արտադրության սերիալներով են փակում եթերաժամը, ինչ վերաբերում է Հանրայինի լրատվականին, ապա բոլորին էլ հայտնի է, «Հայլուրը» դիտելուց քեզ զգում ես Շվեյցարիայում, հաշվիդ էլ ունես մի քանի միլիոն եվրո:

Հայկական երկրորդ հեռուստաալիքն էլ ռաբիս երաժշտությունից, ռեստորանային երգիչների նվիրված հաղորդումներից, «Բնակարան N3» տափակ հեռուստասերիալից բացի որեւէ այլ բան չի ներկայացնում:

Հիմնականում զվարճալի հաղորդումների ու սերիալների վրա է կառուցված նաեւ Արմենիայի եթերը:

Հասկանալի է, ՀՌԱՀ-ը չի կարող նման հեռուստաընկերություններին եթերից զրկել: Չէ որ նրանցից յուրաքանչյուրի մեջքին էլ մարդ կա կանգնած, բայց գոնե կարող է սանկցիաներ կիրառել, փորձել բարելավել ու դրական փոփոխություններ մտցնել հեռուստատեսության ոլորտում: Դրա փոխարեն ՀՌԱՀ-ը շարունակում է իր վնասակար քաղաքականությունը, եթեր տրամադրելով ռաբիսին, տգիտությանը, էժանագին ու մարդկանց նյարդեր սղոցող սերիալներին:

Միակ լավ բանը, որ հայկական հեռուստաալիքներում գոյություն ունի՝ ֆուտբոլի ցուցադրությունն է, համաեվրոպական, այլ՝ իսպանական, իտալական եւ անգլիական:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Չայկովսկու անվան դպրոցը կունենա արդի ձայնադարան

**«Հայաստան» համահայկական հիմնադրամն արդիականացնում է Չայկովսկու անվան դպրոցի ձայնադարանը: Այս մասին տեղեկացանք հիմնադրամի հասարակայնության հետ կապերի բաժնից: Դպրոցի ձայնադարանը հիմնանորոգվում ու արդիականացվում է հիմնադրամի Շվեյցարիայի տեղական մարմնի նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ: Ձայնադարանը կհամալրվի ժամանակակից սարքավորումներով ու երաժշտական գործիքներով: Ի. Պ.**

**ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ**

**Մեր խաղացանկին, ներկայացումների լուսանկարներին ու տեսահոլովակներին Դուք կարող եք ծանոթանալ նաեւ մեր http://www.erkat.am/ կայքի ԽԱՂԱՑԱՆԿ էջում**

**ՀՈՒՆՎԱՐԻ ԽԱՂԱՑԱՆԿ**

22, 23-ին ԿԱԲԱՐԵ
28, 29-ին ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ
30-ին ԿԱԲԱՐԵ

*Ներկայացումների սկիզբը ժամը 19:00*

Թատրոնի գեղարվեստական ղեկավար,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ՝
**Արա Երնջակյան**

*Տոմսերը վաճառվում են թատրոնի տոմսարկղում ամեն օր, բացի երկուշաբթի օրից ժամը 11:00 -19:00-ն*
*Հասցեն՝ Մաշտոցի պողոտա, 58*
*(Մատենադարանի հարեւանությամբ)*
*Հեռ. 56-60-70; 58-78-44; (091) 56-60-70*

# Հրանտ Մելքումյանը դարձավ միանձնյա առաջատար




Շախմատի Հայաստանի տղամարդկանց 71-րդ առաջնությունն աստիճանաբար արագություն է վերցնում: Պայքարի սրությունը տուրից տուր աճում է: Երեկ կայացած առաջնության 4-րդ տուրը տարբեր կերպ դասավորվեց աղյուսակը գլխավորող Հրանտ Մելքումյանի եւ Արման Փաշիկյանի համար: Մելքումյանը սեւերով 44-րդ քայլին պարտության մատնեց մրցաշարի հետնապահ Տիգրան Քոթանջյանին ու վաստակելով 3,5 միավոր, միանձնյա գլխավորեց մրցաշարային աղյուսակը: Իսկ ահա Փաշիկյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ 54-րդ քայլին զիջելով Ռոբերտ Հովհաննիսյանին: Վերջինս 2-րդ հաղթանակը տոնեց: Նա վաստակած 2,5 միավորով 2-7-րդ տեղերն է բաժանում Արման Փաշիկյանի, Ավետիք Գրիգորյանի, Տիգրան Պետրոսյանի, Զավեն Անդրեասյանի ու Սամվել Տեր-Սահակյանի հետ:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Զավեն Անդրեասյանի եւ հանրապետության գործող չեմպիոն Ավետիք Գրիգորյանի մրցավեճը: Երկուսն էլ վերջին շրջանում հաջող մրցելույթներ են ունենում, ուստի առաջնության հաղթողի գլխավոր հավակնորդներից են: Նրանց մրցավեճը երկար չտեւեց: 28-րդ քայլին մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին: Իսկ ահա տուրում արձանագրված մյուս ոչ-ոքին Տիգրան եւ Դավիթ Պետրոսյանները գրանցեցին միայն 73-րդ քայլին՝ բոլորից ուշ ավարտելով իրենց մրցավեճը:

Առայժմ անհաջող են հանդես գալիս առաջնության ամենափորձառու մասնակիցներ Արտաշես Մինասյանն ու Աշոտ Անաստասյանը, որոնք դեռ չեն ճաշակել հաղթանակի քաղցրությունը: 4-րդ տուրում երկուսն էլ պարտվեցին իրենցից ավելի երիտասարդ շախմատիստներին: Արտաշեսը սպիտակներով պարտվեց Սամվել Տեր-Սահակյանին, իսկ Աշոտը զիջեց գյումրեցի գրոսմայստեր Արա Մինասյանին: Վերջինս 2 միավորով 8-րդ տեղում է, որին հաջորդում է 1,5 միավոր ունեցող Դավիթ Պետրոսյանը: 1-ական միավոր են վաստակել Արտաշես Մինասյանն ու Աշոտ Անաստասյանը, իսկ աղյուսակը եզրափակող Տիգրան Քոթանջյանն առայժմ բոլոր 4 պարտիաներում էլ պարտվել է:

Այսօր կայանալիք 5-րդ տուրում առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Փաշիկյան-Տիգրան Պետրոսյան, Անդրեասյան-Հովհաննիսյան, Մելքումյան-Գրիգորյան պարտիաները:

# Ժոզե Մոուրինյուն հավանաբար լքի «Ռեալը»

Պորտուգալացի Ժոզե Մոուրինյուն հավանաբար մրցաշրջանի ավարտից հետո հեռանա Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզչի պաշտոնից: Պատճառն ակումբի ղեկավարության հետ տարաձայնություններն ու Մոուրինյուի հասցեին հնչած քննադատություններն են: Առաջին անգամ Մոուրինյուի հնարավոր պաշտոնանկության մասին սկսեցին խոսել, երբ «Ռեալը» ջախջախիչ պարտություն կրեց «Բարսելոնից»: Իսկ երբ առաջնության հետնապահ «Ալմերիայի» հետ հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի (1-1), քննադատության ալիքն ուժգնացավ:

Հարկ է նշել, որ «Ռեալի» մարզիչները մշտապես քննադատվել են եւ խնդիրներ են ունեցել ակումբի ղեկավարության հետ: Օրինակ չեմպիոնի տիտղոսի նվաճումից հետո ակումբի ղեկավարությունը որոշեց հրաժարվել Ֆաբիո Կապելլոյի ծառայություններից այն բանի համար, որ թիմը դիտարժան ֆուտբոլ չի ցուցադրում: Այդ դեպքում հասկանալի է Մոուրինյուի ներկայիս վիճակը, որի օրոք «Ռեալը» ոչ դիտարժան խաղ է ցուցադրում, ոչ էլ արդյունք է ցույց տալիս: Ճիշտ է, թիմն առայժմ հաջող է հանդես գալիս Իսպանիայի գավաթի խաղարկությունում: Ռոնալդուի խփած միակ գոլի շնորհիվ հաղթելով Մադրիդի «Ատլետիկոյին», «Ռեալը» մտել է կիսաեզրափակիչ:

Բոլորին են հայտնի Մոուրինյուի եւ ակումբի գլխավոր մենեջեր Խորխե Վալդանոյի լարված հարաբերությունները: Վերջինս Մոուրինյուին քննադատել էր այն բանի համար, որ նա «Ալմերիայի» հետ խաղում Քարիմ Բենզեմային պահեստայինների նստարանին էր թողել: Իսկ երբ Մոուրինյուն նշանակվել էր «Ռեալի» գլխավոր մարզիչ, Վալդանոն հրապարակայնորեն հայտարարել էր, որ պորտուգալացին ակումբի համար լավագույն տարբերակը չէր:

Մոուրինյուն դժգոհ է ակումբի ղեկավարությունից, որը մերժել էր հարձակվողներ Ուգու Ալմեյդային եւ Ֆեռնանդո Լիորենտեին գնելու մարզչի առաջարկը: Իսպանական լրատվամիջոցների կարծիքով Մոուրինյուն մրցաշրջանի ավարտից հետո կհեռանա «Ռեալից»՝ գլխավորելով «Մանչեսթր Յունայթեդ», «Մանչեսթր Սիթի», «Ինտեր» թիմերից մեկը: Ի դեպ, վերջինս մտադիր է թիմի ղեկը վստահել «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլային, որի գործակալի հետ վերջերս բանակցել է իտալական ակումբի նախագահ Մասիմո Մորատին: Մոսկվայի ԲԿՄԱ-ն էլ պատրաստ է Գվարդիոլային տարեկան 22 մլն եվրո աշխատավարձ վճարել:

# 15 մլն եվրո Պոդոլսկու համար

**Դուբայում ուսումնամարզական հավաք անցկացնող ֆուտբոլի ՌԴ չեմպիոն «Զենիթը» ցանկանում է հրավիրել Գերմանիայի հավաքականի եւ «Քյոլնի» հարձակվող Լուկաս Պոդոլսկուն: Ըստ ակումբի մարզական տնօրեն Իգոր Կորնեեւի, «Զենիթը» պատրաստ է 15 մլն եվրո առաջարկել «Քյոլնին», սակայն առայժմ Պոդոլսկու հետ պայմանագրի կնքման շուրջը չեն բանակցել: Վերջինս եւս առայժմ ոչինչ ասել չի կարող: Նա միայն լսել է, որ «Զենիթը» հետաքրքրվում է իրենով:**

**Սակայն առայժմ «Քյոլնը» չի ցանկանում բաժանվել իր գլխավոր «աստղից», քանի որ թիմին սպառնում է բունդեսլիգային հրաժեշտ տալու վտանգը: Սակայն մյուս կողմից «Քյոլնը» հասկանում է, որ լավագույն դեպքում Պոդոլսկուն հնարավոր կլինի վաճառել առավելագույնը 5 մլն եվրոյով, ուստի չպետք է ձեռքից բաց թողնի 15 մլն եվրո աշխատելու հիանալի հնարավորությունը: Մանավանդ որ Պոդոլսկին էլ, որի պայմանագրի ժամկետը «Քյոլնում» լրանում է 2013-ին, արդեն հոգնել է թիմի նման իրավիճակից եւ ցանկանում է հեռանալ: Ինչպես հայտնի է, ձմռան տրանսֆերային պատուհանը փակվում է հունվարի 31-ին, այնպես որ գործարքը կնքելու համար կողմերը պետք է շտապեն:**

# Էրիկ Կանտոնան մերժեց ռուսներին՝ ընտրելով «Կոսմոսը»

«Մանչեսթր Յունայթեդի» լեգենդար ֆուտբոլիստ Էրիկ Կանտոնան վերադառնում է ֆուտբոլ: Նրան առաջարկվել է ամերիկյան հանրահայտ «Կոսմոս» ակումբի տնօրենի պաշտոնը, որն ընդունել է ֆրանսիացին:

«Ինձ համար հաճելի է եւ մեծ պատիվ է գլխավորել ֆուտբոլային լեգենդար ակումբը: «Կոսմոսը» հարուստ անցյալով հիանալի ակումբ է, որը կարողացել է իր մեջ ներառել ֆուտբոլն ու արվեստը: Ամեն ինչ կանեմ, որպեսզի մեր թիմը ԱՄՆ-ում առաջին տեղը գրավի: Իսկ հետագայում կձգտենք լավագույնը ճանաչվել նաեւ աշխարհում», նշել է Կանտոնան:

«Կոսմոսը» մեծ ճանաչում ուներ հատկապես անցյալ դարի 70-80-ականներին, երբ թիմի կազմում հանդես էին գալիս համաշխարհային ֆուտբոլի այնպիսի վառ անհատականություններ, ինչպիսիք էին ֆուտբոլի արքա Պելեն ու գերմանացի Ֆրանց Բեկենբաուերը: Թիմը հիմնադրել են 1971-ին Ահմեդ եւ Նեսուհի Էրտեգան եղբայրները: 1985-ին այն լուծարվեց: Հյուսիսամերիկյան լիգայի փակումից հետո «Կոսմոսը» փորձեց անկախ թիմ ստեղծել, սակայն դա հաջողություն չբերեց: Իր գոյությունը պահպանեց միայն թիմի երիտասարդական կազմը: 2009-ին ակումբի անվանումը վաճառվեց Պելեի հիմնադրած կազմակերպությանը: 2010-ի օգոստոսին Պելեն հայտարարեց «Կոսմոսի» վերածննդի մասին: Այս պահին թիմի գլխավոր խնդիրը ֆուտբոլի ամերիկյան լիգայի առաջնությանը մասնակցելն է:

Նշենք, որ վերջերս Կանտոնան հրավեր էր ստացել Ռուսաստանից գլխավորելու լողափնյա ֆուտբոլի երկրի հավաքականը: Սակայն Կանտոնան մերժեց ռուսներին եւ ընտրեց «Կոսմոսը»:

## ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Էդգար Մանուչարյանը կմեկնի Լվով



**Ինչպես տեղեկացրել ենք, «Փյունիկի» եւ Հայաստանի հավաքականի հարձակվող Էդգար Մանուչարյանով հետաքրքրվում էր Լվովի «Կարպատները»: Armsport.am-ի տեղեկացմամբ, Էդգար Մանուչարյանը, որի պայմանագրի ժամկետը «Փյունիկի» հետ արդեն ավարտվել է, երեկ պետք է մեկներ Լվով, որպեսզի մեկամյա պայմանագիր կնքեր ուկրաինական ակումբի հետ: Սակայն տեխնիկական պատճառներով Էդգարը դեռեւս Երեւանում է: Նա «Կարպատների» հետ պետք է մեկնի Իսպանիա՝ մասնակցելու թիմի ուսումնամարզական հավաքին: Սակայն դա չի խանգարի Էդգարին մասնակցելու նաեւ Կիպրոսում փետրվարի 6-8-ն անցկացվելիք Հայաստանի ազգային հավաքականի մարզումներին՝ նախապատրաստվելով փետրվարի 9-ին Վրաստանի հավաքականի հետ նախատեսված ստուգողական հանդիպմանը: Ի դեպ, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան դեռեւս անցյալ տարվա վերջին աշխատանքներ էր տանում, որպեսզի փետրվարին ազգային հավաքականը գոնե 2-3 ընկերական հանդիպում անցկացնի: Սակայն ինչպես նշել է հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը, ստիպված կլինեն բավարարվել վրացիների հետ խաղով:**

# Յուրա Մովսիսյանը թերեւս տեղափոխվի «Կրասնոդար»



**Armsport.am-ի տեղեկացմամբ Կրասնոդարի համանուն ֆուտբոլային թիմը շահագրգռված է Յուրա Մովսիսյանին իր կազմում ընդգրկելու հարցով եւ վերջինիս հետ բանակցում է: Մովսիսյանն այդ նպատակով կժամանի Կրասնոդար: Եթե ամեն ինչ բարեհաջող ավարտվի, ապա Հայաստանի հավաքականի հարձակվողը դանիական «Ռանդերսից» կտեղափոխվի «Կրասնոդար»:**

**«Կրասնոդարը» հանդես է գալիս ՌԴ առաջնության առաջին խմբում, որտեղ զբաղեցրել է 5-րդ տեղը: Սակայն բացառված չէ, որ թիմը նոր մրցաշրջանում հանդես գա ՌԴ առաջնության պրեմիեր լիգայում: Բանն այն է, որ երեկ «Սատուռնը» ֆինանսական խնդիրների պատճառով պաշտոնապես հայտարարել է առաջնությունից դուրս գալու մասին: Իսկ «Կրասնոդարն» իր հերթին դիմել է Ռուսաստանի ֆուտբոլի պրոֆեսիոնալ լիգային՝ խնդրելով թույլատրել թիմին 2011-ին հանդես գալու պրեմիեր լիգայում: Այս հարցի պատասխանը կտրվի հունվարի 25-ին:**

**Ի դեպ, տեղեկացնենք, որ «Սատուռնում» էր ընդգրկված հայկական ֆուտբոլի վառ անհատականություններից մեկի՝ Խորեն Հովհաննիսյանի որդին՝ Ժորան: Վերջինս ֆուտբոլային իր կարիերան սկսել էր «Փյունիկում», ապա տեղափոխվեց Հունաստան: «Սատուռնում» Հովհաննիսյանը հիմնականում թիմի փոխարինող կազմում էր խաղում:**

# Արոնյանն ու Սարգսյանը կրկին հաշտություն կնքեցին

Վեյք Ան Զեեի մրցաշարի 6-րդ տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով ոչ-ոքի խաղաց չինացի Վան Հաոյի հետ: Դա մրցաշարում հայ շախմատիստի 5-րդ խաղաղ արդյունքն էր: 6 տուրից հետո Լեւոն Արոնյանը Մաքսիմ Վաշիե-Լագրավի, Վլադիմիր Կրամնիկի, Յան Նեպոմնյաշչիի եւ Մագնուս Կառլսենի հետ 3,5 միավորով բաժանում է 3-7-րդ տեղերը:

6 տուրից հետո 4,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Վիշվանաթան Անանդը եւ Հիկարու Նակամուրան: Անանդը ոչ-ոքի խաղաց Ալեքսանդր Գրիշչուկի հետ, իսկ Նակամուրան հաղթեց Էրվին Լ՛ Ամիին: Վլադիմիր Կրամնիկն անդրանիկ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Ալեքսեյ Շիրովի նկատմամբ: 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Մագնուս Կառլսենը՝ ստիպելով հանձնվել Յան Սմիթսին: Յան Նեպոմնյաշչին էլ պարտության մատնեց Անիշ Գիրիին: Պոնոմարյովն ու Վաշիե-Լագրավը հաշտություն կնքեցին:

Այսօր կայանալիք 7-րդ տուրում Արոնյանը սեւերով կմրցի Ալեքսանդր Գրիշչուկի հետ: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաեւ Կառլսեն-Անանդ պարտիան:

B խմբի մրցաշարում Գաբրիել Սարգսյանը կրկին ոչ-ոքի խաղաց՝ այս անգամ միավորը կիսելով Վլադիսլավ Տկաչովի հետ: Դա տուրում գրանցված միակ խաղաղ արդյունքն էր: Գաբրիելն էլ Արոնյանի նման 5-րդ ոչ-ոքին գրանցեց իր օգտին: Նա 3,5 միավորով Դավիթ Նավարայի հետ բաժանում է 4-5-րդ տեղերը:

5 միավորով աղյուսակը շարունակում է գլխավորել անգլիացի գրոսմայստեր Լյուկ Մակշեյնը, որը հաղթեց Ռադոսլավ Վոյտաշեկին: Նրան կես միավոր է զիջում Զախար Եֆիմենկոն, որը պարտության մատնեց Վուտեր Սպուլմանին: 4 միավորով 3-րդ հորիզոնականում է Ուեսլի Սոն, որն առավելության հասավ Լորան Ֆրեսինեի նկատմամբ: Նավարան հաղթեց Գանգուլիին, Ջանն պարտության մատնեց Համերին, Լյեմն էլ առավելության հասավ Նիյբոյերի նկատմամբ:

# Եզրափակիչում՝ «Շախտյորն» ու «Ինտերը»

**Ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» խաղարկությունում հայտնի դարձան եզրափակչի մասնակիցները: Վաղը կայանալիք վճռորոշ խաղում մրցանակը կվիճարկեն Բելառուսի «Շախտյորը» եւ Բաքվի «Ինտերը»: «Շախտյորը» 2-1 հաշվով հաղթեց Ռիգայի «Սկոնտոյին», իսկ Ադրբեջանի չեմպիոնը 5 անպատասխան գնդակ ուղարկեց 2-րդ կազմով հանդես եկող Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» դարպասը:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## Orange-ը ՈւԵՖԱ Եվրո 2012-ի պաշտոնական գործընկերն է

*Սա Orange-ի ամենամեծ համաեվրոպական հովանավորության նախագիծն է, որն ընդգրկում է եվրոպական 11 երկրներ*




Հունվարի 19-ին Orange-ը հայտարարեց 2012 թ. հունիս եւ հուլիս ամիսներին Լեհաստանում եւ Ուկրաինայում կայանալիք ՈւԵՖԱ-ի ֆուտբոլի Եվրոպայի առաջնության պաշտոնական հովանավորը լինելու մասին` այսպիսով միանալով ՈւԵՖԱ-ի գործընկերը դարձած համաշխարհային ապրանքանիշների ընտանիքին: Որպես գլոբալ հովանավոր` Orange-ը հնարավորություն կունենա EURO 2012-ի շրջանակներում իր 11 եվրոպական շուկաներում ներկայացնել Եվրո 2012-ի հետ կապված բազմաթիվ հետաքրքրական ծառայություններ, այդ թվում` հատուկ EURO 2012-ի համար մշակված եւ բջջային հեռախոսների համար նախատեսված ծրագրային հավելվածը: Orange Լեհաստանը կլինի EURO 2012-ի պաշտոնական տեխնոլոգիական գործընկերը, որի շրջանակներում կտրամադրի ամրակցված եւ անլար կապի ամբողջական ծառայություններ:

Որպես ընկերության կողմից երբեւիցե հովանավորված առաջին իսկապես համաեվրոպական սպորտային իրադարձություն` EURO 2012-ը վերահաստատում է Orange-ի ցանկությունը` տրամադրել իր հաճախորդներին վերջիններիս հետաքրքիր ու սիրելի բովանդակություն` այս անգամ սպորտային համատեքստում: Գիտակցելով, որ սպորտը եւ հատկապես ֆուտբոլն իր բազմաթիվ հաճախորդների համար իսկական տարերք է, Orange-ն իր եվրոպական երկրներում սպորտային այս իրադարձությունը կյանքի կկոչի իր ինտերնետային եւ բջջային պլատֆորմների միջոցով` առաջարկելով հատուկ բովանդակություն եւ ծառայություններ եւ այսպիսով հնարավորություն ընձեռելով իր հաճախորդներին լավագույնս վայելել առաջնությունը:

«Սա կարեւոր իրադարձություն է Orange-ի համար, որով խանդավառված ենք բոլորս: Սա հովանավորության ամենամեծ համաեվրոպական նախագիծն է, որում ներգրավվել ենք եւ որը վկայում է Եվրոպայում մեր բրենդի հզորացման մասին: Ինչպես ՈՒԵՖԱ-ի համար իր երկրպագուները, այնպես էլ մեր բաժանորդներն են մեր արժեհամակարգի կենտրոնում: Սա հրաշալի համադրում է, եւ միասին մենք մեր բաժանորդներին ու երկրպագուներին ավելի կմոտեցնենք այն ամենին, ինչ նրանք սիրում են», ասաց Orange Ֆրանս Տելեկոմի փոխնախագահ **Օլաֆ Սուանեին**:

«Մենք մեծ ուրախությամբ ենք ողջունում Orange-ի մուտքը 2012 թ. կայանալիք ՈւԵՖԱ-ի Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության հովանավորողների ընտանիք: Մենք ակնկալում ենք, որ EURO 2012-ը մեծ հաջողություններ կունենա եւ շատ ոգեւորված ենք, որ Եվրոպայի ազգային հավաքականների էլիտար մրցաշարն այս անգամ անցկացվելու է Լեհաստանում եւ Ուկրաինայում: Մեզ համար վճռորոշ նշանակություն ունի մեր գործընկերների` Orange-ի կողմից առաջարկվող ծառայությունները եւ տեխնիկական աջակցությունը, որը հնարավորություն է ընձեռելու ապահովել խաղերի ուղիղ հեռարձակումը Լեհաստանի մարզադաշտերից ՈւԵՖԱ-ի շատ այլ հեռարձակող գործընկերներին եւ այնուհետեւ ֆուտբոլասերներին ողջ աշխարհում: Ի լրումն վերը ասվածի` 2012 թ. ՈւԵՖԱ-ի Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության շրջանակներում Orange-ի մշակած բազմաթիվ ծառայությունների շնորհիվ ֆուտբոլասերները նոր հնարավորություններ կունենան` վայելելու եւ միմյանց հետ կիսվելու Եվրոպայի ազգային թիմային մրցաշարի տպավորություններով», ասաց ՈւԵՖԱ-ի գործադիր տնօրեն **Դավիդ Թեյլորը**:

Հովանավորության նախագծի մանրամասների վերաբերյալ վերջնական որոշումները կկայացվեն յուրաքանչյուր երկրի համար առանձին, սակայն այս նախագծի շրջանակներում հաճախորդներին ուղղված գործունեության հիմնական բաղադրիչներից են լինելու ֆուտբոլային տոնին մասնակցության տոմսերը, Orange եւ EURO 2012 ապրանքանիշների բացառիկ նվերներ, ինչպես նաեւ այլ անակնկալներ: Ավելին, բջջային հեռախոսների համար նախատեսված պաշտոնական ծրագրային հավելվածը, որը կմշակվի ՈւԵՖԱ-ի հետ համագործակցությամբ, կներառի նոր ու հետաքրքրական բովանդակություն:

Պայմանագրում ընդգրկված երկրներն են` Իսպանիան, Լեհաստանը, Ֆրանսիան, Միացյալ Թագավորությունը, Սլովակիան, Ռումինիան, Ավստրիան, Լյուքսեմբուրգը, Մոլդովան, Շվեյցարիան եւ Հայաստանը:

Orange Արմենիան, որպես միջազգային բրենդի եւ Խմբի անդամ ընկերություն, Խմբի գլոբալ համագործակցության շնորհիվ իր բաժանորդներին նույնպես թույլ կտա մասնակցել համաեվրոպական այս մեծ տոնին, որը միավորելու է Եվրոպայի բոլոր ֆուտբոլասերներին եւ դառնալու է 2012 թ. ամենակարեւոր իրադարձություններից մեկը: Ինչպես միշտ, միջոցառման հովանավորությունը չի սահմանափակվելու միայն ապրանքանիշի տեսանելիության եւ բազմաթիվ առավելություններ է տալու Orange-ի, այդ թվում` Orange Արմենիայի բաժանորդներին եւ թույլ է տալու նրանց լիովին վայելել Եվրո 2012-ը:

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

### Դուդուկահարների մրցույթի ամփոփում եւ գալա համերգ

Երաժշտասերներին հրավիրում ենք մասնակցելու Ռուսաստանի հայերի միության տասնամյա հոբելյանին նվիրված Ջիվան Գասպարյանի անվան դուդուկահարների առաջին մրցույթի արդյունքների ամփոփման հանդիսավոր արարողությանն ու դափնեկիրների գալա համերգին:

Մրցույթն անցկացվել է ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության եւ Հայաստանի երաժշտական ընկերության հետ համատեղ:

Հրավիրատոմսերի համար դիմել Ռուսաստանի հայերի միության մասնաճյուղի գրասենյակ:

**Հասցեն` Տերյան 69:**
**Հեռ.` 510440, 510442**

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի և ՀՀ կառավարության 07.03.03թ N 217-Ն և N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Սյունիքի մարզի Նոր Արևիկի մերձակա տարածքում էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից տրված N93 հատուկ լիցենզիայի համաձայն իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքների համար Արևիկ գետից 0.854 լ/վրկ անհրաժեշտ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17:00-18:00-ն դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն` Կառավարության 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011թ. հունվարի 27-ին, ժամը 16:00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

**ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը վարձակալությամբ տրամադրում է տարածք`

| Հասցե | Ազատ տարածք (քմ) |
|---|---|
| ք.Ճամբարակ, Պ.Սեւակի 7 | նկուղային հարկից 99.9քմ. |
| ք.Գավառ, Բուռնազյան 2 | 1-ին հարկից 161.8քմ. |
| ք.Երեւան Իսահակյան 28 | 1-ին հարկից 23.3քմ. |

* Պետական սեփականություն հանդիսացող գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանը եւ օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (տարածքի) վարձակալության կարգը հաստատելու մասին» 22.02.01թ. թիվ 125 որոշմամբ հաստատված կարգի համաձայն.

* Գույքը (տարածքը) ուղղակի ձեւով վարձակալության է տրամադրվում, եթե մամուլում եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով հայտարարության հրապարակումից հետո առաջին հայտը ներկայացվելու օրվանից 10-օրյա ժամկետում այլ հայտեր չեն ներկայացվել, եւ դիմողը միանվագ վճարում է առնվազն 3 ամսվա համար հաշվարկված նվազագույն վարձավճարը, իսկ նշված 10-օրյա ժամկետում այլ հայտ կամ հայտեր ներկայացվելու դեպքում գույքը վարձակալության է տրամադրվում աճուրդով:

Այլ տեղեկություններ կարող եք ստանալ Վարչության ինտերնետային կայքէջից հասցե` www.privatization.am, կամ դիմելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ք. Երեւան Տիգրան Մեծի 4, 4-րդ հարկ, գույքի տնօրինման բաժին, հեռախոս 58-35-40:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 ՀԱՍՑԵՈՒՄ**

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1737-Ն որոշման ,ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմե պետական կառավարչական հիմնարկի տնօրինության օտարման ենթակա գույքը

| Հ/Հ | Գույքի անվանումը | Թողարկման/ձեռքբերման տարեթիվը | Գույքի գնահատված արժեքը 19.11.2010թ. դրությամբ /դրամ/ | 22.02.2011թ. աճուրդի | | 11.03.2011թ. աճուրդի | | 28.03.2011թ. աճուրդի | | 13.04.2011թ. աճուրդի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ |
| 1 | Ա/մ «ԳԱԶ-311000» (պ/հ` 215 L L 01) | 2000թ./2001թ. | 1098000 | 1098000 | 54900 | 878400 | 43920 | 702720 | 35136 | 562176 | 28109 |

| Հ/Հ | Գույքի անվանումը | 29.04.2011թ. աճուրդի | | 16.05.2011թ. աճուրդի | | 31.05.2011թ. աճուրդի | | 16.06.2011թ. աճուրդի | | 04.07.2011թ. աճուրդի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ |
| 1 | Ա/մ «ԳԱԶ-311000» (պ/հ` 215 L L 01) | 449741 | 22488 | 359793 | 17990 | 287835 | 14392 | 230268 | 11514 | 184215 | 9211 |

*Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության 2011թ. հունվարի 19-ի թիվ 1/1-88 գրության ավտոմեքենան ենթակա է նորոգման եւ չի շահագործվում :

**Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1737-Ն որոշման` ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետն աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի, ինչպես նաեւ գույքի արժեքի որոշման համար նախատեսված 18000 դրամ գումարի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) վճարումից հետո մեկամսյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր` դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել տրանսպորտային միջոցի պետական հաշվառման հետ կապված` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գումարներն ու տուրքերը:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 14:30 -ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար մինչեւ աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00-ն աճուրդային հանձնաժողովին են (հասցեն` ք.Երեւան,Դ.Անհաղթի 23) ներկայացրել`

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է` յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտքագրման հաշիվն է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի թիվ 163518001652 դրամային հաշիվը,

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 15000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է: Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ` աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար` 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են ընդհուպ մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում `յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն: Գույքը գտնվում է ք.Երեւան, Գրիբոյեդովի 2/1 շենքի հարակից ավտոտնակում, լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել /055/920003 եւ /077/920003 հեռախոսահամարներով:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը` նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայս ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է` հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմելուց հետո :

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան,Դ.Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին` հեռախոս` 23-73-00 ինտերնետ` URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխությունները ու լրացումները կիրառարկվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

**ՀՀ կառավարությանն առընթեր**
**պետական գույքի կառավարման վարչություն**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան`21.1.2011, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: